Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

25(628)
9.09.2021
Հրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Лусарар ❁ ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ❁ Lusarar

ՈԳԵՇՆՉՄԱՆ ԱՌԻԹՆԵՐ՝ ՀԱՆՈՒՆ ՎԱՂՎԱ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ

ԼՂՀ անկախության հռչակման 30-ամյակի կապակցությամբ հանրապետության խորհրդարանում կազմակերպվել էր հատուկ նիստ, որտեղ մասնավորապես շեշտվել է արցախակենտրոն հայության գաղափարը:

Նկատենք, այս գաղափարն արծարծվում էր Արցախյան շարժումից ի վեր, սակայն այն միշտ ինչել է նպատակային միջոցառումների համատեքստերում՝ առանց հեռանկարային բանաձևումների: Հատկապես նոր իրողությունների համապատկերին՝ տարածքների կորուստ, հազարավոր նվիրական զոհեր, մշուշոտ ապագա, Ազգային ժողովում հնչած ուղերձը ձեռք է բերում ուղենշային արժեք:

Մենք միշտ հպարտանում ենք, որ աշխարհում տասը միլիոնից ավելի հայ կա: Սա ինչ-որ տեղ մանկամտական մոտեցում է, որովհետև հինգ հազարամյա պատմություն ունեցող ազգի համար այդ թվաքանակը, ընդհակառակը, վհատեցնող փաստ է: Այլ բան է, եթե մենք լինեինք հարյուր միլիոն՝ տասնապատիկ մեծ պետական սահմաններ ունեցող տարածքով: Բայց ունենք այն, ինչ ունենք, և առաջնահերթ խնդիր է այսօր կոորդինացնել եղած հնարավորությունները ու ներուժը: Կարողանո՞ւմ ենք դա անել…

Անշուշտ, Սփյուռքից նյութական օգնություններ պարբերաբար լինում են, հատկապես, հայկական ավանդական կուսակցությունների հայրենանվեր գործունեության շնորհիվ, սակայն ամբողջական ներուժն այդպես էլ չի օգտագործվում: Եվ հարց է ծագում՝ արդյո՞ք աշխարհասփյուռ հայի համար Արցախը հայրենիք է: Անցյալ տարվա ահաբեկչական պատերազմն Արցախի դեմ ցույց տվեց, որ հայկական երկրորդ պետությունը ոչ միայն Մայր Հայաստանի հուսալի սահմանադուռն է, այլև նրա ֆիզիկական գոյության գլխավոր երաշխիքը: Ասել է թե չկա Արցախ՝ չկա Հայաստան: Այս թեզն աստիճանաբար համընկալում է ստանում հայկական կենսատարածքում, ինչը կարելի է անվանել անցած պատերազմի ծանր դաս:

Պետք է կարողանալ մատաղ սերնդին ճիշտ դաստիարակել, առանց պլակատային կարգախոսների, և այս առումով անձնական օրինակը լավագույն դասն է: Սեպտեմբերի 1-ին, երբ կրթարաններում ավանդույթի համաձայն հայրենասիրության դաս էր անցկացվում, բարձր դասարանցի մի աշակերտ մեր ներկայությամբ հեգնանքով ասում էր. «Ի՞նչ հայրենասիրություն պիտի քարոզի մեր դասատուն, երբ անցյալ տարվա սեպտեմբերի 27-ի առավոտյան ընտանիքով ճողոպրել էր Արցախից»: Ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են:

Շատ կարևոր է, որ արտերկրում ապրող յուրաքանչյուր հայի համար Արցախն իրապես դառնա հայրենիք: Իսկ հայրենիքը սիրել՝ նշանակում է անմնացորդ ծառայել նրան, ծառայել ոչ միայն զենքով կամ նյութական աջակցությամբ, այլև գիտությամբ ու մշակույթով: Հարկ ենք համարում մեջբերել լիբանանաբնակ խմբավար և երաժիշտ Զաքար Քեշիշյանի անձնական օրինակը: Արդեն 29 տարի է, Քեշիշյանը մշակութային գործունեություն է ծավալում Արցախում: Շուշիում ստեղծել էր «Վարանդա» հայտնի երգչախումբը, որտեղ ընդգրկվել էր տաղանդավոր հայ երեխաների մի քանի սերունդ: Նրանցից շատերի համար երգարվեստը հետագայում դարձել է մասնագիտություն: Օրերս Զաքարը կրկին Արցախում էր և կրկին երգչախումբ էր ձևավորել, բնականաբար, այս անգամ Ստեփանակերտում: Բոլոր այն համերգների ժամանակ, որոնք կազմակերպել էր Քեշիշյանը, դահլիճը լեփ-լեցուն էր: Լիբանանահայ մեր բարեկամի ամեն մի ելույթ ներկաների համար ոգևորության անխառն պոռթկում էր:

Մեզ ոգեշնչման բազում առիթներ են պետք՝ հանուն վաղվա հաղթանակների:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԱՀ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ հայրենակիցներ

Սեպտեմբերի 2-ը կարևորագույն օր է մեր կյանքում: Երեսուն տարի առաջ Ստեփանակերտում գումարված՝ ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանում հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Պետականաշինության ճանապարհին մենք մեծ ձեռքբերումներ ու կորուստներ ենք ունեցել:

Խոնարհվում եմ հանուն հայրենիքի ընկած նահատակների հիշատակի առջև: Անդառնալի են մարդկային կորուստները, միևնույն ժամանակ՝ պարտավորեցնող: Մենք պատմական պարտավորություն ունենք՝ ապրել ու արարել մեր սեփական հայրենիքում, կերտել Արցախի Հանրապետությունը՝ առաջնորդվելով մեր ազգային արժեքներով և միջազգայնորեն ամրագրված իրավունքներով:

Շնորհավո՜ր Արցախի Հանրապետության օրը:

ԱՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ ԼՈՒՍԻՆԵ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ դպրոցականներ, ուսանողներ, հարգարժան ուսուցիչներ, կրթության և գիտության մշակներ

Այս ուսումնականը մենք սկսում ենք բավականին բարդ և անսովոր պայմաններում. բռնազավթված դպրոցներ, տեղահանված ուսուցչություն և աշակերտություն՝ հայրենյաց կորստի, մշտամորմոք տառապանքի անմունջ ցավն ու անդուլ պայքարի ոգին հոգիներում անթեղած: Այնուամենայնիվ, մենք շարունակելու ենք գրել մեր հերոսական պատմությունը, և հայ ուսուցչի դավանանքը մնալու է սերունդներին հայեցի կրթելը, հայակերտումն ու առաքինացումը:

Հարգելի՛ ուսուցիչներ, իհրավի, կրթության համակարգի խնդիրներն ու մարտահրավերներն այսօր բազմապատկվել են, հետևաբար, մեր պայքարն էլ ավելի է դժվարացել: Ազնվասեր, գրագետ ու հայրենասեր սերունդ կրթելուց զատ մենք պետք է կարողանանք ստեղծել անվտանգությունը երաշխավորող գիտելիք՝ ինքնակառուցման հրամայականով: Սա է ժամանակի բացատրագիրը:

Այո՛, մենք հետևողականորեն կլծվենք կրթական համակարգի պարբերական բարեփոխումների գործընթացին և մոտ ապագայում ամբողջությամբ կանցնենք երկարօրյա ուսուցման համակարգին: Արցախում կշարունակի ստեղծվել ժամանակին համահունչ գիտելիք: Վկայությունը բնագիտական միջազգային օլիմպիադայում այս տարվա մեր նվաճումն է: Պատմական հենց այս ժամանակահատվածում է, որ կրթական համակարգը պետք է խիզախի ու նվաճի:

Կրթության ու գիտության սիրելի՛ մշակներ, ձեր ուսերին է ոչ միայն աշակերտներին հմտություններ ու կարողություններ տալը, այլև հանրային ու ազգային գիտակցություն ձևավորելու խնդիրները: Համոզված եմ՝ մենք միասին կհաղթահարենք նաև մեր հարատևման այս փորձությունը և կշարունակենք գրել հիշատակության արժանի հայ հերոս զինվորի սխրանքների մասին: Ուրեմն՝ ի գործ, ի փառս և ի հիշատակ 44-օրյա պատերազմում առաքինացած ու անմահացած մեր հերոս տղաների, ի շահ հայակերտումի և հայապահպանումի:

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆԸ ԱՐՑԱԽԻ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԴԱՍՈՎ

Մայր բուհում նոր ուսումնական տարին մեկնարկեց Արցախի Հանրապետության հռչակման և Գիտելիքի ու դպրության օրվան նվիրված անկախության դասով, որը վարել են ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը և ՊԲ հրամանատարի ԲՀԱ գծով տեղակալ, գնդապետ Նորայր Մկրտչյանը:

Անկախության դասը մեկնարկել է մեկ րոպե լռությամբ՝ հարգելով պատերազմի հետևանքով հավերժի ճամփորդ դարձած տղաների հիշատակը:

Ողջունելով ներկաներին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհավորել է ուսանողներին ու դասախոսներին Գիտելիքի ու դպրության օրվա առթիվ՝ նշելով, որ այսուհետ բոլոր միջոցառումները պետք է սկսել՝ խնկարկելով պատերազմի նահատակ դարձած մեր լույս տղաների հիշատակը:

«Նրանց չապրած կյանքն ու անօրինակ սխրանքը պատգամում են յուրաքանչյուր ապրողի էլ ավելի մեծ պատասխանատվությամբ լծվել իրեն բաժին հասած աշխատանքին ու առաքելությանը, ուսանողին՝ սովորել, դասախոսին՝ սովորեցնել, միասին ապրելով մեր հայրենիքում ու ապրեցնելով Արցախի Հանրապետությունը: Միայն համառ աշխատանքով, մեծ նպատակասլացությամբ, անկոտրում կամքով ու համախմբվածությամբ կարող ենք հաղթահարել մեզ բոլորիս բաժին ընկած դժվարությունները և ուղղենք պատերազմից կորացած մեջքը»,- նշել է Ա. Սարգսյանը:

ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը, շնորհավորելով անկախության հռչակման և գիտելիքի ու դպրության տոների առթիվ, ընդգծել է, որ ԱՀ ԿԳՄՍ-ն պատրաստ է իրականություն դարձնել սովորողների կրթական երազանքները:

«Արցախում կշարունակի ստեղծվել ժամանակին համահունչ գիտելիք: Արցախը ունի այդ ներուժը: Վկայությունը՝ բնագիտական միջազգային օլիմպիադայում այս տարվա մեր նվաճումն է: Պատմական հենց այս ժամանակահատվածում է, որ կրթական համակարգը պետք է խիզախի ու նվաճի: Պետականությունը ձեռք է բերվում շատ թանկ գնով: 30 տարի առաջ մենք ունեցանք պատմության փառավոր էջեր՝ հայկական զույգ պետություն: Ես հավատում եմ մեր վերադարձին, հավատում եմ կրթության ու գիտության դավանանքին: Համոզված եմ՝ մենք միասին կհաղթահարենք նաև մեր հարատևման այս փորձությունը և կշարունակենք գրել հիշատակության արժանի հայ հերոս զինվորի սխրանքների մասին»,- նշել է նախարար Ղարախանյանը՝ հավելելով, որ մեր պատմությունը այսուհետ պետք է գրվի այնպես, ինչպես մեր լույս տղաներն են իրենց սխրանքով պատգամում:

ՊԲ հրամանատարի ԲՀԱ գծով տեղակալ, գնդապետ Նորայր Մկրտչյանը, շնորհավորելով համալսարանականներին, անդրադարձել է ԼՂՀ անկախության հռչակման պատմական նախադրյալներին, որոնք 30 տարի առաջ հայ ժողովրդի առջև դրել էին լինել-չլինելու խնդիր, և անկախության հռչակումը հրամայական էր դարձել:

«Այդ լինել-չլինելու խնդիրը հայ ժողովրդի առջև դրվեց նաև 2020թ. սեպտեմբերի 27-ին: Մեր տղաներն անօրինակ սխրանքներով ու հերոսական դրվագներով ցույց տվեցին մինչև վերջ կանգնելու ու պայքարելու հայ ժողովրդի անկոտրում կամքը: Արցախյան բոլոր պատերազմների ընթացքում մեր հերոս տղաների, նվիրյալների շնորհիվ այսօր ունենք Արցախի Հանրապետություն: Արցախի անկախությունը հայ ժողովրդի գոյության բանալին է»,- նշել է Նորայր Մկրտչյանը՝ հավելելով, որ անկախությունը բացարձակ արժեք է, և որի պահպանման ու ամրապնդման համար առանցքային դեր ունի գիտելիքներով զինված քաղաքացին:

Համալսարանականներին շնորհավորել են նաև «Արցախի պահեստազորի սպաների միություն» ՀԿ ներկայացուցիչները:

ՆՈՐ ՈՒՍՏԱՐԻ

ՄԱՐՏՈՒՆԻՆ ԴԻՄԱՎՈՐԵՑ ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԸ

Սեպտեմբերի 1-ին՝ Գիտելիքի, գրի և դպրության օրը, Մարտունու կրթօջախները դպրոցականներին ընդունեցին մեծ ջերմությամբ ու բարեմաղթանքներով, բայց և առանց հատուկ տոնախմբության, ինչպես ընդունված էր:

Նելսոն Ստեփանյանի անվան հ.1 միջնակարգ հոսքային դպրոցի նոր ուսումնական տարվա բացման միջոցառմանը ներկա էին Մարտունու շրջվարչակազմի ղեկավար Էդիկ Ավանեսյանը, հյուրեր, ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ:

Բացման և ողջույնի խոսք ասաց դպրոցի ՄԿԱԳ տնօրենի տեղակալ Ջուլիետա Սարգսյանը: «Նոր ուսումնական տարվա առթիվ բոլորին ցանկանում եմ գիտելիքների ձեռքբերման ճանապարհին կամքի ուժի դրսևորում, հայի ամրակուռ ոգի, նպատակների իրականացում, անձնուրաց նվիրվածություն հայրենիքի վերականգնման և հզորացման գործում: Հավատանք յուրաքանչյուրի բացառիկությանը, օժտվածությանն ու արժանիքներին: Շնորհավոր տոնդ, սիրելի՛ կրթօջախ, մեր սիրասուն առաջին դասարանցի, մեր փոքրիկ ուխտավոր, առաջին անգամ դպրոցի շեմ ոտք դնող մեր հրաշամանուկ»,- բարեմաղթել է նա:

Շնորհավորանքի խոսքով հանդես եկավ դպրոցի տնօրեն Կ. Պողոսյանը: «Սիրելի՛ աշակերտներ, սովորելը պարտավորեցնող է: Հավատում եմ, որ կարող է հաղթել այն սերունդը, որը հիմա մեծանում է, որը պետք է ունենա ամենալավ կրթությունը, որպեսզի նորանոր աղետներ թույլ չտանք մի բուռ դարձած մեր հողում»,- ասել է տնօրենը:

Չնայած նախորդ ուսումնական տարին անցել է բարդ ու դժվարին պայմաններում, համավարակի և պատերազմի արհավիրքի ուղեկցությամբ, այնուամենայնիվ, դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները կարողացել են կրթության ոլորտում գրանցել լուրջ ձեռքբերումներ ու հաջողություններ:

Դպրոցն այսօրվա դրությամբ ունի 561 աշակերտ, առաջին դասարան է հաճախել 39 աշակերտ:

Գիտելիքը հարստացնում է մարդու միտքն ու հոգին: Կրթված մարդը մեր երկրի զարգացման ու հզորացման կարևոր գործոնն է, նա կարողանում է հասարակության մեջ գտնել իր տեղն ու դիրքը ու միշտ ձգտում է հասնել ավելի մեծ ձեռքբերումների: Շնորհավորում և մեր բարեմաղթանքներն ենք հղում բոլոր դպրոցականներին Գիտելիքի և դպրության օրվա առթիվ: Ցանկանում ենք ձեզ գիտելիքի հանդեպ նվիրական ձգտում և հաջողություններով լի, արգասաբեր, խաղաղ ուսումնական տարի: Շնորհավորում ենք առաջին դասարանցիներին, որոնք առաջին անգամ ոտք են դնում նոր ուսումնական հաստատություն և ցանկանում նրանց լուսավոր ճանապարհ, նորանոր հաջողություններ: Շնորհավորում ենք նաև մեր նվիրյալ ուսուցիչներին՝ սերնդին հայեցի կրթելու և դաստիարակելու գործում ավելի մեծ ուժ, համբերություն և նվիրում մաղթելով: Այսուհետ թող մեր երեխաներն ականատես չլինեն արհավիրքների և մեծանան ու կրթվեն խաղաղ երկնքի տակ:

Լուսինե ԴԱՇՅԱՆ

ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՅՈՒՂԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Սեպտեմբերի 1-ին՝ Գիտելիքի և դպրության օրը ԱՀ բոլոր դպրոցներում հնչեց 2021-2022 ուսումնական տարվա առաջին զանգը: Այս տարի Մարտունու շրջանի Թաղավարդ Կալերի հիմնական դպրոցն իր դռներն է բացել 3 առաջին դասարանցու առաջ:

Օրվան նվիրված՝ դպրոցի բակում կազմակերպվել էր փոքրիկ միջոցառում: Ներկա էին ԱՀ ԱԱԾ տնօրենի 1-ին տեղակալ Արարատ Մելքումյանը, համայնքների ղեկավարներ Օլեգ Հարությունյանը, Նարեկ Աթայանը, Մարտունու շրջվարչակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչի պաշտոնակատար Աննա Ավանեսյանը, գլխավոր մասնագետ Կարինե Գևորգյանը:

Բացման խոսքում դպրոցի տնօրեն Մարգարիտա Սահակյանը շնորհավորեց բոլորին Գիտելիքի և դպրության օրվա, ԱՀ անկախության օրվա կապակցությամբ: Առանձնահատուկ շնորհավորեց առաջին դասարանցիներին ու ծնողներին. «Մեր առջև դրված է մեծ խնդիր, ավելի եռանդով պետք է աշխատել, ավելի լավ պետք է սովորել, քանի որ թշնամին շատ մոտ է: Պետք է ապացուցել, որ հայը անպարտելի է, պետք է հետ բերենք մեր հողերը, մեր Թաղավարդը, Արցախի կորցրած մասը: Թող մեր փոքրիկների մուտքը բարի լինի, ունենան խաղաղ դպրոցական տարիներ»:

Թաղավարդ Կալերի հիմնական դպրոցը նախորդ տարի ունեցել է 52 աշակերտ: Երեխաները կարողացան ուժ գտնել, հաղթահարել վախն ու դժվարությունները, վերադառնալ հարազատ գյուղ, շենացնել հարազատ կրթօջախը: Այսօր դպրոցն ունի 37 սովորող: Հույսով սպասում են, որ մնացած աշակերտները ժամանակի ընթացքում կվերադառնան սիրելի գյուղ ու հարազատ դարձած կրթօջախ:

Կարմիր Շուկայի միջնակարգ դպրոցում մինչ պատերազմը սովորում էր 247 աշակերտ: Պատերազմից հետո, հունվարին 78 աշակերտ էր հաճախում դպրոց: Ուսումնական տարին ավարտեցին 180 աշակերտով: Այսօր կրթօջախն իր գիրկն առավ 23 առաջին դասարանցու: Պահի դրությամբ այստեղ սովորում է 207 աշակերտ:

Երկու դպրոցներում ներկայացրել են Մարտունու շրջվարչակազմի ղեկավար Էդիկ Ավանեսյանի ուղերձը Գիտելիքի ու դպրության օրվա, նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ:

Դպրոցի տնօրեն Զավեն Բաղասյանը ողջունեց ներկաներին, շնորհավորեց օրվա առթիվ.

«Մարդու կյանքում, ինչպես գիտենք, դպրոցական տարիները կարծես անցնում են ակնթարթի պես, ու մի գեղեցիկ օր մենք կտեսնենք մեր փոքրիկ բալիկներին արդեն կանգնած 12-րդ դասարանցիների տեղում, և կլինեն նրանց նման մեծացած, ինքնավստահ, կրթված, հայրենասեր և պատրաստ պաշտպանելու մեր հայրենիքը և հաղթահարելու կյանքում հանդիպած բոլոր դժվարությունները»:

Ամփոփելով նախորդ ուսումնական տարին՝ դպրոցի գերազանց առաջադիմություն ցուցաբերած աշակերտները պարգևատրվել են պատվոգրերով:

12-րդ և 1-ին դասարանների աշակերտները հանդես են եկել գեղեցիկ ասմունքով:

Վերոնշյալ երկու դպրոցներում կգործի «Երկարօրյա դպրոց» ծրագիրը: Դասասենյակները հարմարեցված են դասապրոցեսն իրականացնելու համար: Բայց խնդիրներն ու անելիքները շատ են:

Թաղավարդ-Կարմիր Շուկա բնագծի հրամանատարի տեղակալ, էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ, անասնաբուժական գիտությունների թեկնածու, դոցենտ Նորայր Մուսայելյանն իր և իր մարտական ընկերների անունից շնորհավորել է բոլորին օրվա կապակցությամբ:

«Մեր ժողովուրդը մշտապես մեծարումով է տոնել Գիտելիքի և դպրության օրը: Դպրոցը եղել և մնում է հայրենասիրության դարբնոց, քանզի այստեղ են ձևավորվում հայրենիքի ապագա պաշտպանը, երկիրը շենացնող գիտնականը, շինարարը, մանկավարժը, իսկ անհաջողության մատնվելու դեպքում՝ գողը, ավազակը, դասալիքը և պոպուլիստը: Այն, ինչ սիրում ես, այն էլ պաշտպանում ես:

Հարգելի՛ մանկավարժներ, աշակերտներ, սիրե՛ք գիտելիքը, որը ձեռք բերելուց հետո կպահպանեք նաև սիրելի հայրենիքը: Գիտելիքը ուժ է ցանկացած ոլորտում: Ստանալով լավագույն կրթություն՝ դուք կարող եք այն ուղղել մեր երկրի շենացմանն ու հզորացմանը»,- մասնավորապես նշել է նա:

ԱՀ նախագահի հրամանագրով Արցախյան երրորդ պատերազմում հակառակորդի սանձազերծած լայնածավալ ռազմական գործողությունների ընթացքում ԱՀ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած բացառիկ քաջության ու արիության համար մի շարք հայրենակիցներ պարգևատրվել են մեդալներով, որոնք հանձնել է ԱՀ ԱԱԾ տնօրենի 1-ին տեղակալ Արարատ Մելքումյանը:

Սիրելի՛ առաջին դասարանցիներ, դուք ձեր առաջին քայլն արեցիք դեպի գիտության դարբնոց՝ ստանալու այն մարգարիտները, որոնք ձեր առջև պիտի փռեն Մեսրոպյան ոգով առաջնորդվող ուսուցիչները: Եղե՛ք ուսումնատենչ և երբեք չհագենաք ուսման ծարավից:

Շնորհավոր Սեպտեմբերի 1՝ Գիտելիքի և դպրության օր: Բարի՛ երթ, սիրելի՛ աշակերտներ:

Ն. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՊԱՏԳԱՄ ՈՒ ՄԱՂԹԱՆՔ ՍԿՍՆԱԿ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

(Նոր ուստարվա առիթով)

Հոգևոր դաշտը
Որ դարձնեք բեղուն,
Օրինակ դարձրեք
Ձեզ համար
Ժրաջան մեղուն:
Միաժամանակ
Ուզում եմ ասել
Ես, որ արդ կյանքի
Բարձունքն եմ հասել,
Խորհուրդս՝ լինել
Երեխայասեր:
Սրտանց սիրեցեք
Ձեր ընտրած գործը՝
Յուրացնելով
Լավագույն փորձը
Մեր ուսուցիչների՝
Ներկա և նախորդ,
Դպրոցն էլ դառնա
Ձեզ համար ոչ խորթ,
Այլ միշտ հարազատ
Օջախը՝ տուն երկրորդ,
Ձեր սերն էլ նրա
Հանդեպ՝ ջերմ ու հորդ,
Լեռնաղբյուր ու գետ,
Երջանիկ զգաք
Ձեր սաների հետ:
Ձեր հայացքից
Եվ ձեր աչքերից
Նրանց նկատմամբ
Սեր ճառագայթեն,
Բողբոջների պես
Բառերը պայթեն,
Ձեր ուղին, որ դեռ
Արահետ, մայթ են,
Դառնան լայն փողոց,
Եվ դուք համարվեք
Մտքի բերդ-ամրոց
Դռները ոչ գոց
Սաների համար,
Դառնաք միշտ նրանց
Հավատը անմար,
Շավիղներ ստեղծեք
Նպատակահարմար:
Երբեք չկեղծեք,
Դասեր տաք լավ, ճիշտ,
Օրինակ դառնաք
Ձեր սաներին միշտ,
Ոչ թե խոսքերով,
Բառահոսքերով,
Նաև գործերով՝
Համոզիչ, խոսուն,
Մտքի աղբյուրը
Ձեր՝ զուլալ, հոսուն…
Չէ՞ որ խոսքերը
Լավ քարոզում են,
Սակայն գործերը
Եվ համոզում են:
Այսքանից հետո
Արդ՝ շնորհավոր
Ձեր ուսումնական,
Մանկավարժական
Նոր տարին,
Ձեր ոտքը երբեք
Չդիպչի քարին,
Այլ ձեզ ուղեկցեն
Միշտ լավը, բարին,
Տապալեք չարին,
Աչքալուսանք տանք
Արցախ աշխարհին,
Առատ լինի և
Հոգևոր հացը,
Արևով ժպտա
Միշտ լուսաբացը:

Թովիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
գ. Ճարտար
Թոշակառու մանկավարժ

ԸՆԹԱՑՔ

ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՏԱՐՎԱԾԻ ԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՄԲ

Օգոստոսի 28-ին Մարտունի քաղաքում տեղի ունեցավ խորհրդակցություն, որին ներկա էին ԱՀ պետական նախարար Արտակ Բեգլարյանը, ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը, ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանը, ԱՀ նախագահի խորհրդական, «Երկարօրյա դպրոց» ծրագրի համակարգող Վահրամ Սողոմոնյանը, Մարտունու շրջվարչակազմի ղեկավար Էդիկ Ավանեսյանը, շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչի պաշտոնակատար Աննա Ավանեսյանը, շրջվարչակազմի պատասխանատուներ, շրջանի հանրակրթական, նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրեններ, ուսուցիչներ, դաստիարակներ:

2020-2021 ուսումնական տարվա կատարած աշխատանքները ներկայացրեց շրջվարչակազմի աշխատակազմի ԿՍ բաժնի վարիչի պաշտոնակատար Աննա Ավանեսյանը:

Նշվեց, որ Մարտունու շրջանում 2020-2021 ուսումնական տարվա սկզբից գործել է 36 հանրակրթական դպրոց՝ 7 մասնաճյուղով, որից 24-ը՝ միջնակարգ (2-ը՝ հոսքային), 12-ը՝ հիմնական: Դպրոցներում եղել է 3578 սովորող, կոմպլեկտավորվել է 355 դասարան-համակազմ:

2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմական գործողությունների արդյունքում Մարտունու շրջանի Սարգսաշեն, Շեխեր, Ջիվանի, Ջարդանաշեն, Վազգենաշեն համայնքները, Թաղավարդ համայնքի մի մասը և Ճարտարի Ներքին Ճարտար թաղամասն անցել են թշնամու վերահսկողության տակ, որի պատճառով կորցրել ենք վեց միջնակարգ դպրոց՝ մեկ մասնաճյուղով: Թշնամու վերահսկողության տակ անցած տարածքների դպրոցներում սովորում էր 430 աշակերտ, ընդհանուր աշխատողների թիվը 194 էր, որից ուսուցիչ՝ 130:

2021թ. հունվարից շրջանում գործում է 30 հանրակրթական դպրոց՝ 6 մասնաճյուղով, որից 18-ը՝ միջնակարգ, 12-ը՝ հիմնական, սովորողների թիվը կազմում էր 3250 հոգի: Կոմպլեկտավորվել է 286,5 դասարան-համակազմ: Մարտունու շրջանի հանրակրթական դպրոցներում սովորում է թշնամու վերահսկողության տակ գտնվող տարածքներից տեղահանված 159 աշակերտ:

2020-2021 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադայի շրջանային փուլին մասնակցել է 170 աշակերտ՝ 6 առարկաներից: Օլիմպիադան անց է կացվել միայն բնագիտամաթեմատիկական առարկաներից և ՆԶՊ-ից:

Հանրապետական փուլի արդյունքներով ունենք մեկ 1-ին և երկու 3-րդ մրցանակային տեղեր, իսկ 4 աշակերտ ակտիվ մասնակցության համար արժանացել է գովասանագրերի: Օլիմպիադայի եզրափակիչ փուլին մասնակցել է 2 աշակերտ՝ Մարտունու հ. 1 միջնակարգ (հոսքային) դպրոցից՝ «Կենսաբանություն» առարկայից, Հերհերի միջնակարգ դպրոցից՝ «Աշխարհագրություն» առարկայից:

Եզրափակիչ փուլում «Կենսաբանություն» առարկայից Մարտունու հ. 1 միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Գևորգ Ավանեսյանն արժանացել է 1-ին կարգի դիպլոմի ու ՀՀ թիմի կազմում մասնակցել է միջազգային օլիմպիադային և նվաճել արծաթե մեդալ: Մարտունու հ. 1 միջնակարգ դպրոցի թիմը մասնակցել է նաև ՀՀ-ում կայացած «Պատանի քիմիկոսներ» միջազգային մրցաշարին և զբաղեցրել 1-ին մրցանակային տեղը:

Շրջանի հանրակրթական դպրոցների աշակերտներն ունեցել են բազում հաջողություններ նաև սպորտի ոլորտում:

Ա. Ավանեսյանը տեղեկություն հաղորդեց նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերաբերյալ: Շրջանում գործում է 9 պետական և մեկ ոչ պետական մանկապարտեզ 31 խմբով՝ 724 երեխայի ընդգրկմամբ, Քերթի միջնակարգ դպրոցին կից երկու և Խնուշինակի միջնակարգ դպրոցին կից մեկ նախադպրոցական խմբերով՝ 49 երեխայի ընդգրկմամբ:

ԱՀ պետական նախարար Ա. Բեգլարյանը ելույթի իր խոսքում մասնակիորեն ասաց.

«Մենք առայսօր բազմաթիվ հաջողություններ ենք արձանագրել կրթական համակարգում շնորհիվ ձեր և ձեր գործընկերների: Պատերազմի ժամանակ այն հերոսները, ովքեր անմահացել են և ովքեր ողջ են, նաև մեր կողքին, նրանք հերոսացել են ձեր տված կրթության ու դաստիարակության շնորհիվ: Ցանկացած պատերազմ ցուցիչ է և՛ հաջողությունների, և՛ ձախողումների, ուժեղ ու թույլ կողմերի: Մեզ համար սա քննություն է՝ հասկանալու համար, թե որտեղ ենք ձախողումներ ու բացթողումներ ունեցել: Սա նաև ինքնավերլուծության գլխավոր առիթ է՝ հասկանալու համար, թե է՛լ ինչ կարող ենք անել մեր խնդիրներին ու ավելի դժվար մարտահրավերներին դիմակայելու և հաղթահարելու համար: Ես համոզված եմ, որ հիմնական լուծումները կրթական համակարգում են՝ մանկապարտեզից մինչև համալսարան: Անկեղծ եղեք ինքներդ ձեզ հետ, ինքնավերլուծության, ինքնազարգացման, ինքնակատարելագործման հարցում անկե՛ղծ եղեք և ջանք մի՛ խնայեք: Բաց եղե՛ք անկեղծ խնդիրներն ընդունելու հարցում, սրտացավ քննադատությունը ցավով մի՛ ընդունեք և պատրաստ եղե՛ք կողքից ձեզ նայելու, ու դուք կտեսնեք, որ յուրաքանչյուր ոք, նույնիսկ եթե շատ լավ մանկավարժ է, տնօրեն է, բարելավվելու մեծ տեղ ունի»:

ԱՀ ԳԹԿ տնօրեն Յու. Քարամյանը ներկայացրեց 2020-2021 ուսումնական տարվա արտաքին ընթացիկ գնահատման և միասնական քննությունների արդյունքները, որոնք այս տարի գոհացուցիչ էին: Ինչպես նաև խոսեց ներառական կրթության նրբությունների մասին:

ԱՀ նախագահի խորհրդական, «Երկարօրյա դպրոց» ծրագրի համակարգող Վահրամ Սողոմոնյանը ողջունեց ներկաներին և ներկայացրեց «Երկարօրյա դպրոց»-ի ծրագիրը:

«Մենք մի քանի ամիս է, ինչ փորձում ենք մի քանի կրթական ծրագրեր իրականացնել Արցախում: Ինչպես բազմիցս նշել ենք, կրթությունն ամենակարևոր ոլորտն է, և հատկապես այս մեծ աղետից հետո պետք է մեր ուժերը կենտրոնացնենք հենց կրթության մեջ: Եվ այս սերունդը, որ հիմա մեծանում է, պետք է ունենա աշխարհի ամենալավ կրթությունը, որպեսզի թույլ չտա, որ նոր աղետներ լինեն մեր երկրում: «Երկարօրյա դպրոց» ծրագիրն իրականացվում է Արցախի սահմանամերձ համայնքների 14 դպրոցներում: Այս տարի բավականին արագ տեմպերով 4-5 ամսվա ընթացքում մեծ ծավալի աշխատանք ենք տարել 4 շրջաններում՝ 14 դպրոցներում ճաշարանային պայմաններ ստեղծելու համար, վերանորոգելու, արդիականացնելու դասասենյակներ, կահավորելու սարքավորումներով, կահույքով, նոր ուսումնաօժանդակ նյութերով, խաղերով և այլ նյութերով: Այս ամենն իրականացվում է Սփյուռքի տարբեր համայնքների ֆինանսավորմամբ, այսինքն՝ ֆիզիկական պայմանների բարելավման աշխատանքներն իրենց վրա են վերցնում Սփյուռքի համայնքները, իսկ պետությունն իր կողմից ավելացնում է աշխատատեղեր, մանկավարժական աշխատողներ, խոհարարներ: Բայց ծրագրի առաջնային խնդիրն ուղղված է կրթության որակի բարձրացմանը: Մարտունու շրջանում ընդգրկված են վեց՝ Աշանի, Բերդաշենի, Թաղավարդի, Կարմիր Շուկայի, Քերթի և Սոսի դպրոցները»,- ելույթի իր խոսքում նշեց պատասխանատուն:

ԿԳՄՍ նախարար Լ.Ղարախանյանը իր խոսքում ասաց.

«Մենք անցյալ տարի ոչ սովորական պայմաններում ենք սկսել ուսումնական գործընթացը՝ համավարակի պատճառով, այս տարի ևս ոչ սովորական պայմաններ են: Եվ չափազանցություն չէ, եթե ասեմ, որ մենք շարունակում ենք արտակարգ ռեժիմով աշխատել, որովհետև մեր մեջ շատ մեծ ցասում կա, կսկիծ, կորստի ցավ կա, որը չի շրջանցել ոչ մեկիս: Պատերազմից հետո նախարարությունը աշխատանք է տանում երկու ուղղությամբ. դրանք վերականգնման և զարգացման ծրագրերն են: Զարգացման ծրագրերից է «Երկարօրյա դպրոց»-ը: Նախատեսում ենք առաջիկա երկու տարում ԱՀ բոլոր դպրոցներում գործողության մեջ դնել ծրագիրը: Մյուս զարգացման առանցքային ծրագրերից է «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների և ԱԹՍ ուսումնական աշխատանոցների տեղադրումը: Առաջիկայում նման լաբորատորիա նախատեսում ենք տեղադրել Մարտունիում: Պատերազմի պատճառով 11 «Արմաթ» ենք կորցրել, պատերազմից հետո 5 լաբորատորիա ենք տեղադրել: Առաջիկա երկու տարում ԱՀ բոլոր դպրոցները պետք է ունենան նման լաբորատորիաներ: Մուշկապատում նախատեսում ենք բացել տեխնոպարկ»:

Լ. Ղարախանյանն անդրադարձել է կրթական ոլորտի մյուս ծրագրերին, ուսուցիչների, տնօրենների, զինղեկների վերապատրաստումներին:

«Ամեն ինչ պետք է անենք, որ մեր համակարգն առաջ տանենք: Նախարարությունը պատրաստ է ցանկացած հարցում աջակցել ձեզ: Տվեք մեզ հարցեր, ծրագրեր, և մենք կիրականացնենք ձեր կողմից բարձրացված բոլոր հարցերն ու ծրագրերը: Ես հավատում եմ մեր սերնդին, հավատում եմ, որ գիտելիքը կարող է հաղթել: Մնանք մեր բարձրության վրա, ճիշտ աշխատենք, որովհետև սերունդները մի օր մեզ գնահատելու են»,- իր խոսքը եզրափակեց նախարարը:

Տերունական աղոթքով սկսեց իր խոսքը Ն զորամասի հոգևոր սպասավոր Գալուստ Սարկավագ Վարդանյանը: «Մեր մշտագնա աղոթքներում խնդրենք Տիրոջից, որ մեր նահատակ տղաների հոգիները լույսերի մեջ պահի»,- նշել է նա:

Խորհրդակցության ընթացքում տեղի է ունեցել պարգևատրման արարողություն: 2020թ. սեպտեմբերի 27-ին հակառակորդի սանձազերծած լայնածավալ ռազմական գործողությունների ընթացքում ԱՀ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած բացառիկ քաջության ու արիության համար ԱՀ պաշտպանության բանակի Ն զորամասի զինծառայող, շարքային Վահե Միհրանի Ջիվանյանը, Ն զորամասի զինծառայող, ավագ ենթասպա Սամվել Կառլենի Ղահրամանյանը հետմահու պարգևատրվել են «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով, Ն զորամասի զինծառայող, շարքային Արտյոմ Ռոբերտի Զաքարյանը՝ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով: Շքանշանները հարազատներին է փոխանցել Ն զորամասի հրամանատարի բարոյահոգեբանական ապահովման գծով տեղակալ Մհեր Սարգսյանը:

Լ. Ղարախանյանը պարգևատրել է «Արցախը կարդում է» ամառային գրքարշավի մասնակից ուսուցիչներին ու աշակերտներին:

Խորհրդակցության վերջում ոլորտի պատասխանատուները պատասխանել են մասնակիցների կողմից բարձրացված հարցերին:

Նարինե ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՑԱՎԸ ԴԱՐՁՆԵԼ ՊԱՅՔԱՐ

Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի 20 շրջանավարտներ իրենց կյանքն են նվիրաբերել հայրենիքին անցյալ տարվա սեպտեմբերին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմում: Սեպտեմբերի 4-ին դպրոցում տեղի ունեցավ նրանց հիշատակին պատրաստված հուշատախտակի բացումը:

Ելույթ ունենալով՝ դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանը մասնավորապես ասաց, որ ամեն օր դասերն սկսվելուց առաջ դպրոցի աշակերտներն անպայման խոնարհվելու են նահատակված տղաների հիշատակի առաջ:

«Մեր հերոս տղաները հանուն մեր չքնաղ Արցախի չխնայեցին ուրախությամբ, երազանքներով լեցուն իրենց կյանքը՝ հանուն ապրողներիս կյանքի, հանուն Հայոց աշխարհի հավերժության: Սակայն պետք է առաջ նայենք, ցավը պետք է դարձնենք պայքար՝ հանուն մեր լուսավոր, հպարտ տղաների. տղաներ, ովքեր 10 տարի շարունակ այս դպրոց են հաճախել ժպտալով, աշխույժ, կենսախինդ: Մեր ապագան կերտած բոլոր տղաների անունները պարտավոր ենք հիշել և հանուն նրանց պայքարել ու արարել», - ասաց դպրոցի տնօրենը:

Միջոցառման ընթացքում դպրոցի աշակերտները հանդես եկան գրական-գեղարվեստական մոնտաժով:

Սեփ. լրատվություն

Ի ՀԻՇԱՏԱԿ ՀԵՐՈՍԻ

Սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցում տեղի ունեցավ Արցախյան ազատագրական պայքարի նվիրյալ, ՊԲ 4-րդ վաշտի հրամանատար, ՀՀ Ազգային հերոս, Արցախի Հերոս, «Հայրենիք» և «Ոսկե Արծիվ» շքանշանների ասպետ Յուրի Վաղարշակի Պողոսյանի կիսանդրու բացման հանդիսավոր արարողությունը: Մայրաքաղաքի հ. 6 դպրոցը 2019 թվականից կրում է հերոսի անունը: Արարողությանը ներկա էին ԱՀ պետնախարար Արտակ Բեգլարյանը, Նախագահի աշխատակազմի ղեկավար Կարեն Շահրամանյանը, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանը, Ստեփանակերտի քաղաքապետ Դավիթ Սարգսյանը, հերոսի մարտական ընկերները, հարազատները:

Բացման խոսքում Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի պետ Թերեզա Ղարախանյանը բարձր գնահատեց Յու. Պողոսյանի ներդրումն Արցախյան պատերազմի տարիներին ու բանակաշինության գործում: Նա վստահություն հայտնեց, որ հերոսի կիսանդրու տեղադրումը դպրոցի բակում մանկավարժական կոլեկտիվի ու աշակերտության համար նոր լիցք ու ազդակ կհանդիսանա առավել մեծ պատասխանատվության, քանզի Յու. Պողոսյանն այն քաջերի փաղանգից է, ովքեր իրենց սխրագործությամբ և կյանքի գնով ոչ միայն գրեցին մեր նորօրյա պատմության էջը, այլև դարձան լեգենդ ժամանակակիցների ու գալիք սերունդների համար: Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին անմահ զոհերի հիշատակը:

Հ. 6 հիմնական դպրոցի տնօրեն Արթուր Մինասյանի դիտարկմամբ, խորհրդանշական օրն ու պահը արժևորվում են ևս մեկ իրադարձությամբ. իրենց շարքերում Յու. Պողոսյան հերոսի հավերժ ներկայությամբ: Ահա թե ինչու իրենք ավելի կուռ ու միասնական են դառնալու և իրենց ընտրած պայքարի անշեղ ճանապարհին հավատարիմ են մնալու նվիրյալների արդար պայքարի ոգուն ու գաղափարին: Բազմաթիվ առաքինություններով օժտված իրենց հերոսը հայրենապաշտ էր, տաղանդավոր զինագործ, խիզախ զինվոր ու հրամանատար, առաջին ինքնապաշտպանական ջոկատների կազմակերպիչներից մեկը, 4-րդ վաշտի առաջին հրամանատարը՝ նահանջ ու պարտություն չճանաչող: Ըստ Ա.Մինասյանի՝ մեծ պատիվ է աշխատել ու սովորել ազգային հերոսի անվան դպրոցում, և իրենք կանեն ամեն ինչ, որպեսզի իրենց սաները կրեն Յու. Պողոսյանի արժեքները, և նրա անունը կրող կրթօջախը դարձնեն հայրենապաշտության դարբնոց:

Հերոսի որդին՝ Սամվել Պողոսյանը, որն իր իսկ խոստովանությամբ հոր հետ կապված մեծ հիշողություններ չունի (որովհետև շատ փոքր էր, երբ զարկվեց հայրը), վստահություն հայտնեց, որ հոր հուշարձանը նոր ու գալիք սերունդների համար լինելու է հայրենիքն անմնացորդ սիրելու և նրա համար կյանքն անգամ չխնայելու վառ օրինակ: Նա փոքր անգամ չի կասկածում, որ դպրոցը թողարկելու է նոր Յուրի Պողոսյաններ, ովքեր հերոսի կոչման պիտի արժանանան նոր հաղթանակներ կերտելու ճանապարհին: Դպրոցի նախկին տնօրեն Արթուր Ավետիսյանն իր հերթին բարձր գնահատելով հերոսի անցած մարտական փառավոր ուղին՝ ներկաներին պատգամեց գոտեպնդվել հերոսի պատգամներով և ձեռք ձեռքի, ուս ուսի շենացնել չքնաղ Երկիրը՝ ունելով վեր հառնելու և վերընձյուղվելու առաքելությունը:

Հուշարձանի կերտող-քանդակագործ Հրանտ Մնացականյանը մեծ պատիվ է համարում լինել հեղինակը Հայաստանի ու Արցախի հերոսի հուշաքանդակի:

ԱՀ «Մայրություն» ՀԿ նախագահ Հասմիկ Միքայելյանի խոսքը մեծարումն էր հայ մոր ու կնոջ, մեծարում ու խոնարհում բոլոր նրանց առաջ, ովքեր ծնում, սնում ու դաստիարակում են հերոս ու հայրենապաշտ զավակներ՝ պատրաստ զոհվելու ի սեր և ի փառս հայրենիքի: Ի դեմս Յու. Պողոսյանի մոր՝ Էլվիրա Պողոսյանի, նա իր խոնարհումը բերեց հերոսներ ծնող հերոս հայ մայրերին:

ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանը հորդորեց տեր կանգնել հերոսների կտակած ու նրանց իսկ արյամբ սրբագործված ավանդներին, իսկ աշակերտներին պատգամեց լինել նպատակասլաց ու ստեղծագործ:

Օրհնության խոսք ասաց ու օծման կարգ կատարեց Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր-Մինաս քահանա Մովսիսյանը: Ելույթներն ուղեկցվում էին դպրոցի սաների երաժշտական կատարումներով: Հուշարձանի բացման պատիվը տրվեց հերոսի որդուն՝ Ս. Պողոսյանին ու քանդակագործ Հ. Մնացականյանին: Ներկաները ծաղիկներ խոնարհեցին Արցախյան երրորդ պատերազմում հ. 6 դպրոցի շրջանավարտ 4 նահատակների հուշատախտակին:

Սիրվարդ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Լուսանկարը՝ Ալվարդ Գրիգորյանի

ՀԱՎԱՏՈՎ՝ ԱՌ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿ

Ամեն տարի սեպտեմբերին մշակութային կյանքն Արցախում հարստանում է Շուշիի «Վարանդա» երգչախմբի համերգային կատարումներով: Այս տարի ևս երգչախումբը ծրագիր է պատրաստել, սակայն ավանդական համերգը հինավուրց բերդաքաղաքում, ցավոք, տեղի չունեցավ հասկանալի պատճառներով: Զաքար Քեշիշյանի ղեկավարած հանրահայտ երգչախումբը հանդես եկավ միայն Ստեփանակերտում, այն էլ՝ մի քանի անգամ: Արցախ կատարած հերթական այցելության ընթացքում իր շուրջը համախմբելով «Վարանդա» երգչախմբի, ինչպես նաև շուշեցի, հադրութցի, ստեփանակերտցի և հանրապետության այլ շրջանների մանուկների ու պատանիների, Քեշիշյանը կազմել է հետաքրքիր համերգային ծրագիր՝ ամեն համերգի ժամանակ ապահովելով լեփ-լեցուն դահլիճ:

Համերգներից ստացած տպավորությունն անչափ մեծ է: Սեպտեմբերի 2-ին ԼՂՀ հռչակման 30-ամյակին նվիրված համերգից հետո ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը, բարձր գնահատելով «Վարանդա»-ի դերը Արցախի հոգևոր-մշակութային կյանքում, լրագրողների հետ զրույցում միաժամանակ անդրադարձել է Արցախի ներկային ու ապագայի տեսլականներին՝ շեշտելով հայրենիքի գիտակցման կարևորությունը.

- Մենք շատ ծանր և անսովոր պայմաններում ենք դիմավորում մեր պետականության 30-րդ տարին: Իմ խորին համոզմամբ, մենք նորից վերադառնալու ենք… ինքներս մեզ: Այն, ինչ հիմա բռնազավթված է, սոսկ քաղաքական պայմանազատումներ են, այն մեր պատմական հայրենիքն է, որտեղ ապրել ենք երեք հազարամյակ: Ինձ մշտապես հուզել են պետություն, պետականություն ունենալու և կորցնելու փաստերը: Պետականության կորստից հոգեկերտվածքում շատ բացասական փոփոխություններ են կատարվում՝ անզորության զգացումից, համազգային թուլությունից, գայթակղություններից ու որոնումներից մինչև վտանգված ինքնություն: Իսկ պետականությունը հոգևոր ու գաղափարական ինքնակազմակերպվածություն է, այն հոգատար վերաբերմունք է պետական ինչքի նկատմամբ, այն պետականության սիմվոլիկան փայփայել է, այն նահատակների հետ ժամադրվել է, և այդ ժամադրումները չպետք է լինեն այսրոպեական, որպեսզի կարողանանք շարունակել նրանց գործը, որի համար զոհվել են: Նրանք մեզ կտակել են ճանապարհային քարտեզ, որով պիտի գնանք:

Աշխարհի երկու հարյուր երկրներ ունեն իրենց պետականությունը: Գուցե սխալվում եմ, բայց աշխարհում ամենաթանկ գնով՝ տասնյակ հազարավոր մատաղ կյանքերի գնով ձեռք բերված պետականությունը մերն է: 2020-ը մեր պատմության համար մի չար դրվագ է: Ես չեմ հաշտվում, և ոչ մեկը չպիտի հաշտվի, համակերպվի կատարվածի հետ: Սրբազան հայրենիքի գիտակցումը մեր մեջ, մեր արյան մեջ, մեր հոգու մեջ, վրեժի ցասումը մեր մեջ՝ պետք է ուժեղանանք, որպեսզի կարողանանք վերադարձնել կորուստները: Որպեսզի մեր պետականությունը դառնա ամբողջական:

Պետականությունը պատասխանատվության զգացում է, և շատ կարևոր է, որ յուրաքանչյուրն ուժեղ պահի իր բնագիծը, իր դիրքը՝ կրթության, մշակույթի, գիտության և բոլոր բնագավառներում, որպեսզի դա դառնա սկզբունք, ապրելակերպ, էություն, դիրքորոշում, վարքային ռազմավարություն: Միայն հանրային և ազգային գիտակցությամբ կարող ենք պահել մեր պետականությունը և աշխարհի ազգերի մեջ երևալ որպես ուրույն դիմագիծ ու ինքնակազմակերպվածություն ունեցող ազգ:

Փառահեղ էին մեր երկու հայոց պետականությունները 30 տարի առաջ: Այսօր կանք, և ես հավատում եմ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչմանը: Թուրք-ադրբեջանական տանդեմը փորձում է ոչնչացնել շատ դժվար գնով ձեռք բերված մեր պետականությունը, ոչնչացնել ժողովրդական արժեքները: Բայց ես հավատում եմ արդարության հաղթանակին, հավատում եմ ավելի բարձր ուժերի՝ Արարչին, Տիեզերքին, Բնությանը:

...Ավելացնենք, որ «Վարանդա»-ն ծրագրել է հանդես գալ նաև դպրոցականների առաջ, և դա իսկական տոն կլինի աշակերտների համար:

Սեփ. լրատվություն

ԱՊՐԱԾ ԵՎ ՉԱՊՐԱԾ ՏԱՐԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՎ



Ինչպե՞ս է լինում, որ զտարյուն մանկավարժը դառնում է ազատամարտիկ ու հերոսության տիպար հանդիսանում: Հանգամանքնե՞րն են դրդում քաջության, թե՞ հերոսականությունը պետք է ի ծնե մարդու արյան մեջ լինի… Վիգեն Գրիգորյանի կենսագրությունն այս բոլորի ճշգրիտ պատասխաններն ունի: Նա նվիրյալ մանկավարժ էր, դպրոցի տնօրեն, Արցախի առաջին խորհրդարանի պատգամավոր, ՀՅԴ Արցախի կառույցի ղեկավար, Հադրութի շրջանի Տող գյուղի գումարտակի շտաբի պետ: Ապրած կարճ կյանքում հասցրել էր այդքանն անել և դրանով իսկ իր անունը ոսկե տառերով գրել հայոց նորօրյա պատմության էջերում:

Տողի Վիգենը… Նա այսօր կլիներ 70 տարեկան, սակայն հերոսի հոբելյանը նրա հարազատները, գաղափարակից և մարտական ընկերները նշեցին առանց Վիգենի: Օգոստոսի 26-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում կայացած հուշ-երեկոն նախատակված ազատամարտիկ-մանկավարժի կյանքի և գործի արժևորումն էր Արցախյան գոյապայքարի համատեքստում: Ելույթ ունեցողները հուշեր պատմեցին նրա կյանքից՝ ուշագրավ դրվագների շեշտումներով:

Հատկանշական է, որ Վիգեն Գրիգորյանի հոբելյանի առթիվ կազմակերպված հուշ-երեկոն նախաձեռնել էր ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը: Նպատակը հայրենասեր արցախցու կերպարը ուսանելի գնահատման բերելն էր, որով նորօրյա մանկավարժական հանրույթը կարող է արժեքավոր հետևություններ անել իր մասնագիտական ու քաղաքացիական հետագա որդեգրումներում: Այս շրջանակում նախարար Լուսինե Ղարախանյանի խոսքը միանգամայն բնութագրական էր: «Ես մեծ սիրով ու սրտի թրթիռով եմ ծանոթացել նրա կենսագրությանը, որը, իմ կարծիքով, խիզախումներով լի է: Այն հատկապես ընդգծված էր նրա ուսանողության տարիներին, երբ խիզախեց 1972 թվականին թռուցիկներ պատրաստել ու տարածել և մարդկանց հանել փողոց՝ նշելու Մեծ եղեռնի 65-րդ տարելիցը: Խիզախությունը նա փոխանցել է սերունդներին ու կնոջը՝ տիկին Գրետային, որն արցախյան առաջին պատերազմում կապավոր էր»,-ասաց նախարարը՝ հավելելով, որ Վիգենն ու նրա նմանները անփոխարինելի արժեք են, որոնցով կարող են մեծացնել մեր ազգային դիմադրողականությունն ու դիմացկունությունը:

Ռազմական փորձագետ Դավիթ Ջամալյանն իր ելույթում կարևոր համարեց համահայկական մասշտաբի գործչի հիշատակն ապագայի հետ կապելը: Նրա խոսքով, պետք է առաջին պլան մղել նման կերպարները և նրանցով մատաղ սերնդին կրթելու, վերականգնվելու, մեջքը շտկելու ոգի սերմանել:

Վիգեն Գրիգորյանի կուսակցական ընկերներ Գրիշա Հայրապետյանն ու Գագիկ Ավանեսյանը, մասնավորապես, կոչ արեցին միասնական ծրագիր մշակել՝ ազատագրելու Տողն ու մեր մյուս գերեվարված հայաշունչ բնակավայրերը: Իսկ ՀՅԴ գործիչ, պատմաբան Լեռնիկ Հովհաննիսյանը հնչեցրեց Տողի մելիքական ապարանքի ընդունարանի մուտքի արձանագրության վերջին նախադասությունը, որի հեղինակը Մելիք Եգանն է: Տեքստի բովանդակությունը կարճառոտ հետևյալն է. թույլ չտվեցի հայության գերի տանի: Այս իմաստով Վիգենին հաճախ անվանում են մեր օրերի Մելիք Եգան:

Այնուհետև ցուցադրվեց տեսանյութ, որտեղ ներկայացվեց Վիգեն Գրիգորյանի անկրկնելի կերպարը՝ ապրած և չապրած տարիների անբեկանելի խորհրդով: Իսկ վերջում Տողի արվեստի դպրոցի սաների և «Մենք ենք, մեր սարերը» ազգագրական համույթի կատարմամբ տրվեց համերգ:

Կ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԿԵՆՍԱՄԻՋԱՎԱՅՐ

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՒԶԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏ

Դրական և բացասական հույզերն ունեն մեծ նշանակություն: Դրանք ճանաչելը և կառավարելը կարևոր է նաև դպրոցականի համար: Հուզական ինտելեկտ. շատերին ծանոթ, մեծ մասին էլ՝ հետաքրքիր: Այս թեմայի շուրջ «Լուսարար»-ը զրուցել է հոգեբանական գիտությունների թեկնածու, թրեյներ ***ՍԵԴԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ*** *հետ:*

- Նախ հասկանանք, թե ինչ է հուզական ինտելեկտը:

- Բարդ անվանման պատճառով այս կարողությունը մարդկանց մեծամասնության համար դառնում է անորոշ և անհասկանալի: Հուզական ինտելեկտը, կամ, ինչպես ես սիրում եմ ասել, «հուզական խելքը» մարդու բանականության և հույզերի մտերմությունն է, համագործակցությունը, որը դրսևորվում է ինչպես սեփական հույզերը գիտակցելու և կառավարելու, այնպես էլ այլ մարդկանց հույզերը ճանաչելու եւ կառավարելու ունակության մեջ: Այս դեպքում նույնիսկ ցանկացած բացասական հույզ ճանաչվում և ապրվում է, ու մարդը դրա ուժը կարողանում է ճիշտ օգտագործել: Այն արդյունավետ հաղորդակցման, ինքնաճանաչողության, այլ մարդկանց ճանաչողության, ինքնակառավարման, ոգեշնչման, մոտիվացիայի աղբյուր է: Եթե շատ համառոտ, ապա՝ այսքանը:

- Այս կարողությունը բացասական կողմ ունի՞:

- Միանշանակ, այն հզոր զենք է: Սա եթե չի օգտագործվում ի բարօրություն, ապա ի վնաս հաստատ կարող է կիրառվել: Հուզական ինտելեկտի մասին մի գրքում կարդացել եմ, որ Սթիվ Ջոբսը եղել է բարձր հուզական ինտելեկտի տեր, բայց այդ կարողությունը օգտագործել է իր ենթականերին վերահսկելու նպատակով: Չգիտեմ որքանով է հավաստի, բայց սա այդ կարողության բացասական դրսեւորման օրինակ է:

- Աշակերտի հուզազգացական զարգացման հիմքը արդյո՞ք դպրոցում է դրվում, թե՞ ընտանիքում: Աշակերտի հուզական ինտելեկտը առնչվո՞ւմ է կրթական միջավայրի հետ և ինչպե՞ս:

- Մարդու հուզական զարգացման, այդ թվում՝ հուզական ինտելեկտի հիմքը դրվում է տանը, իսկ հետագայում՝ կրթական միջավայրում: Ծնողները, առաջին հերթին մայրը, երեխային ծանոթացնում են սեփական հույզերի հետ. «Տղա՛ս, դու այսօր տխո՞ւր ես» կամ արտահայտում են սեփական հույզը. «Ինչքա՜ն երջանիկ եմ, որ դու ծնվել ես»: Ընտանեկան դաստիարակության մեջ թույլ տրվող սխալների հետևանքով առաջացող հուզական խնդիրներն այլ թեմա են: Հուզական ինտելեկտի զարգացումը տրամաբանորեն պետք է շարունակվի կրթական միջավայրում: Կրթական միջավայրում բացի գիտելիք ստեղծելու և վերարտադրելու բաղադրիչից պետք է ներառված լինեն ուսուցչի և աշակերտների հույզերը՝ ինչպես ուսումնական նյութի, այնպես էլ անձնային փոխհարաբերությունների մեջ: Եթե ուսումնական գործունեության մեջ առկա են հետաքրքրության, ուրախության հույզերը, ապա սա արդեն արդյունավետ է: Ուսուցիչն ինքը կարող է նյութի ներկայացման ժամանակ շեշտը դնել ոչ միայն գիտելիքի, այլ նաև աշակերտի հույզերի վրա. «Ի՞նչ ես կարծում, ի՞նչ էր զգում հերոսը այդ քայլն անելիս» կամ՝ «Ես հիացած եմ քո պատասխանով»: Սրանք հուզական ինտելեկտի տարբեր կողմերը զարգացնող հարցադրումներ են:

- Ժամանակաշրջանը փոխվել է. տարիներ առաջ ուսման առաջադիմության հարցը հիմնականում դիտարկվում էր աշակերտի մտավոր կարողություններով, սակայն ժամանակի ընթացքում դա վերափոխվեց, և հաստատվեց, որ դրանով չի կարող երաշխավորվել ուսման առաջադիմության հարցը:

- Այսօր բազմաթիվ հետազոտություններ հաստատել են, որ բարձր առաջադիմությամբ «գերազանցիկ» աշակերտը հնարավոր է դառնա լավ մասնագետ, բայց լինի հոգեբանական լուրջ խնդիրներով մարդ: Ուստի EQ-ն կամ հուզական ինտելեկտն այս առումով հաղթում է IQ-ին կամ բանականության գործակցին: Այս առումով հուզական ինտելեկտը թույլ է տալիս մարդուն գտնել իր պոտենցիալը, սովորել և աշխատել սիրով և նույնիսկ բացասական հույզերն օգտագործել դրական ելքի համար: Ոչ միայն ունենալ աշխարհի մասին գիտելիքների պաշար, լինել խելացի, այլ նաև կարողանալ արդյունավետ փոխհարաբերվել մարդկանց հետ: Այս շարքը կարելի է շարունակել:

- Ուսումնառության ընթացքում ակնկալվող մակարդակ ձեռք բերելու համար ի՞նչ կարևոր նախապայմաններ են անհրաժեշտ աշակերտին:

- Նախ և առաջ իմանալ, թե ինչ է սովորելն իր համար կամ՝ «ինչո՞ւ սովորել»: Այստեղ ուսուցիչը ևս գործ ունի անելու: Ես այս մասին հաճախ եմ խոսում ուսանողների հետ: Որովհետև եթե այդ «ինչու»-ին միացել են հետաքրքրության, արդյունքի ակնկալման երջանկության, գործընթացից ստացվող բավարարվածության ապրումները, մարդը կսովորի՝ ինչքան էլ բարդ լինի: Մինչև սա դառնա ինքնուրույն գիտակցված վերաբերմունք աշակերտի մոտ, այստեղ գործ ունեն անելու և՛ ծնողները, և՛ ուսուցիչները: Ինձ թվում է՝ միակ բանալին այս մոտեցումն է: Կրթության խնդիրն է մոտիվացնել, ներշնչել: Ուստի այն ուսուցչից ևս բարձր հուզական ինտելեկտ է պահանջում՝ համադրած մասնագիտական գիտելիքներով:

- Մարդը՝ որպես սոցիալ-հոգեբանական մի շարք կարծրատիպեր կոտրող էակ, ի՞նչ պետք է անի ճիշտ ինքնակառավարելու և դրական ակտիվություն դրսևորելու համար:

- Ես մարդուն լավատեսորեն եմ վերաբերվում և ցանկացած առիթի դեպքում ասում եմ, որ մարդը վեր է իր կարիքներից, բնազդներից, քանի որ ոչ միայն կենսաբանական, այլև հոգեբանական, հոգեւոր էակ է: Ճիշտ ինքնակառավարման ուղին ինքնաճանաչողությունն է, մարդը պետք է ցանկանա ճանաչել իր ներաշխարհը՝ իր մտքերը, հույզերը, վարքը: Առաջին երկուսի գիտակցման դեպքում նա ունակ է փոխելու իր վարքի ծրագիրը: Սա բացարձակ իրականություն է: Ի՞նչ է նրան պետք այդ հարցում՝ կամք ու մեծ ցանկություն:

ԵՐԲ ՆՐԱ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՄԱՍ Է ԴԱՌՆՈՒՄ ՎԱՎԵՐԱԳՐԵԼԸ... ԱՆՑՅԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

Գրող, հրապարակախոս, մանկավարժ եւ վավերագիր Վիոլետա Խոսրովի Մնացականյանը ծնունդով Արցախի Առաջաձոր գյուղից է: Ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը եւ Գեղագիտական համալսարանի երկամյան: Աշխատել է Հայաստանի Ազգային գրադարանի «Հայ գրքի մատենագիտություն» բաժնում, Երեւանի թիվ 159 կրթահամալիրում, Աբովյան քաղաքի թիվ 6 ավագ դպրոցում, մասնագիտացված քոլեջներում:

Վիոլետա Մնացականյանը միշտ է ստեղծագործել, օգնել, որ սաներն էլ գրքեր ունենան: Հատկապես հուզմունքով է խոսում այն մասին, թե ինչպես է իր առաջարկությամբ բուհ ընդունվելու համար Արցախյան ազատամարտում նահատակված հայորդիների երեխաների հետ անհատույց պարապելու ընթացքում նրանց գրած շարադրություններն իրենց հայրերի մասին հավաքել, ի մի բերել: Պարույր Սեւակի մասին աշակերտների չափածո մտորումները եւս գրքի են վերածել ու հրատարակել «Մեղեդիներ» խորագրով:

«Հաճախ աշակերտներն իրենք են իրենց ստեղծագործությունները տիտղոսաթերթով գիրք հավաքել՝ կազմել պատկերազարդ կազմով, որպեսզի վաստակեն հիմնավոր բարձր գնահատական: Ազգային գրադարանում աշխատածս տարիներին գիրքն իր խորրունկ էությամբ ինձ համար դարձել էր կյանքի ուղեցույց: Եվ այդ ընկալումս գնահատվում էր գրքի երախտավոր Ռաֆայել Իշխանյանի կողմից: Պարտավորեցնող էր: Դպրոցում էլ առիթի դեպքում բերկրալից պահեր էին ապրում սաներս՝ իրենց տեսնելով լուսանկարով ու գրական դիմանկարով գրքի էջերում»,- մեզ հետ զրույցում ասում է տիկին Մնացականյանը: Նժդեհակիր աշակերտների մտքերն էլ հավաքագրել՝ «Նժդեհապատում» գիրք է դարձրել: Հիշում է, որ մի աշակերտ իր խոսքի բնաբանն էր դարձրել Նժդեհի այս խոսքը. «Ապերա՛խտ ժողովուրդ, դու ուզեցիր այն, ինչ թշնամին էր ուզում»: Հետաքրքիր է, ինչո՞ւ է այդպես պատգամագրել: «Այդ շրջանում էր, որ ազդեցիկ ուսուցիչ-տնօրեն Գրետա Կրոյանը ինձ մտերմաբար հանձնարարել էր, որ իր պատվարժան հոր՝ Աբովյան քաղաքի թիվ 6 դպրոցի հիմնադիրներից Մեխակ Կրոյանի մասին նյութեր հավաքեմ: Նրան մտքափոխեցի, որ ընդհանուր դպրոցի մասին գիրք գրվի: Այդպես ծնվեց «Դպրոցը» գիրքը: Ես էլ աշխատանքիս զուգահեռ տարիների ընթացքում ստեղծագործ մտքերս ձեռագիր հավաքագրում էի, իսկ ավագ որդիս սրբորեն պահելը համարում էր պարտականություն: Արդեն տասնհինգ տարուց ավելի է, փորձում եմ ժամանակի թեւերին հանձնել անանձնական մտորումներս՝ վերարթնացնելով պահպանված ոչ վաղեմի գրառումներս: Ժամանակին աշակերտների հետ շփումներս դեպի ընթերցանություն մղելու ելք էի գտել: Հանձնարարություն ունեին օրվա ընթացքում կարդալ 20-30 եւ ավելի էջ, ապա ցույց տալ՝ ծնողի ստորագրությամբ: Տարեվերջին իմ կողմից ստանում էին պարգեւ, սակայն ամենամեծ պարգեւը գիրքն էր»,- հավելում է զրուցակիցս: Գիրքը կենդանի հիշողություն է:

Վիոլետա Մնացականյանի բոլոր գրքերն ազգային մտածելակերպը հաստատուն պահելու ուղենիշեր են: «Ճակատագրի արահետներով»-ը (2018թ.) պատմավեպ է՝ գրական եւ իրական կերպարներով, ովքեր պայքարեցին, որ Շուշին, Արցախն ազատագրվի, զոհվեցին, մարտնչեցին, ողջ մնացածները մարմնով վիրավոր՝ ընտանիք կազմեցին, որ արժանի հետնորդներ ունենան: «Խորհրդաշատ ոլորաններ»-ը (2018թ.) Դադիվանքի, Քարվաճառն ազատագրող եւ պաշտպանողների ընդհանուր բնութագիրն է՝ բնապատկերային գունավոր նկարներով. տեսակով միակն է: «Ոգու ամրոց»-ը հատակում մնացած նվիրյալների եւ ազգային հերոսների մասին է: «Վավերագրական մատյան»-ը բանակ-հասարակություն իրապատկերն է՝ առավելությունների ու թերությունների բարձրաձայնմամբ: Բոլոր գրքերում եզդիների նվիրվածությունը ներառված է: «Աննված Հայաստան»-ը Ապրիլյան պատերազմի ամբողջական նկարագիրն է՝ ըստ ընկալված տեսակետների:

Մնացած գրքերը՝ «Չմարող լույս», «Գեղարվեստական իրապատումներ», «Նժդեհապատում», վերնագրած տարբեր նյութերով գրքերը, «Ազգային գրադարան», «Պատմական Առաջաձոր եւ նորից պատերազմ», նույնպես տեսակով առանձնահատուկ են՝ ընթերցվող, հետաքրքիր դրվագապատումներով: Ընթերցելով վաստակաշատ մանկավարժի տողերը՝ չեմ կարող չառանձնացնել նրա մանրապատումներն ու արձակ բանաստեղծությունները: Տիկին Վիոլետան մանկավարժի ներքին համոզում ունի, որ երբեւէ «Ճակատագրի արահետներով» ծավալուն պատմավեպը կմտնի դպրոցական դասագիրք: 44-օրյա պատերազմի ընթացքում հայաթափված եւ տարագիր դարձած արցախցիների մասին վերջին գրքում տիկին Վիոլետան տպագրել է անանց հիշողությունների գրավոր վկայություններ, որ միայն տնավեր տեղահանվածը կմտածի, որ հենց իր մասին է: «Տարիների փորձից եկել եմ այն եզրակացության, որ գիրքը մարդու հետ զրուցելիս նախանձի, չկամի, երեսպաշտի, կեղծամիտի նման առերեսման չի գնում: Գիրքը բարյացակամ, հանդարտեցնող զրուցակից է»,- ասում է տիկին Մնացականյանը:

Քարվաճառին նվիրված «Խորհրդաշատ ոլորաններ» գիրքը գրելու միտքն առաջացել է, երբ զինծառայող որդու ընտանիքի հետ Քարվաճառում է հաստատվել: «Ինձ գերեց Դադիվանքը, որը ոչ մի ուժ ոչնչացնել չի կարողացել: Ու այդ տարածքներին ծանոթանալիս ակամայից հարց է առաջանում, թե ինչպես կարելի է քննարկել հայկական մշակույթով ներծծված տարածքների հանձնման կամ փոխանակման հարցը»,- պատմում է նա:

Քարվաճառին նվիրված գրքում անդրադարձել է տարածքի հոգևոր շնչին, Քարվաճառի ազատագրմանը, հանուն հայրենիքի այդ կտորի զոհված ազատամարտիկներին ու պաշտպաններին: Գիրքը հագեցած է նաեւ Քարվաճառի գեղատեսիլ վայրերի լուսանկարներով:

Պատմական տեղեկություններ եւ թեմային հարակից վկայող խոսքեր, որոնք էլ գրքում ներառված են համապատասխան վերնագրերի ներքո: Հավատ+Բանակ՝ երկրի ապագան ապահովող երեւույթ-գործոններ: Ազգը հավերժ պահողները միմյանց հաջորդող սերունդն է. առավելությունը զգացվեց 2016թ. ապրիլին՝ զինվորի շուրջ, սահման հսկելու համախմբման հավաքականությամբ: Ընդհանրացնող որոշակի փաստահավաքություն կա հայկական լեռնային բնակավայրին ի մոտ ծանոթանալու՝ եթե հեռվում ես: Բնակվողները հենց իրենք ունեն ինքնախոստովանություն ներառող անսասան կարծիք: Տարիների ընթացքում կողոպուտի ենթարկված մշակույթը նորովի կյանքի է կոչվում: Հավատ՝ գումարած ինքնապաշտպանական հակահարված կրող ուժ՝ դառնում են արդարության եւ խաղաղության երաշխավոր: Ամեն հայի կամք է, որ Դադիվանքը դառնա մտքի ու մաքուր արարման սրբավայր, ինչը եղե՛լ է՝ խլե՛լ են, հիմա կա՛ եւ կլինի՛ հավիտյանս հավիտենից…

Ոգեկոչ հատվածներ «Խորհրդաշատ ոլորաններ» գրքից.

ՀԱՎԱՏՈՎ՝ Ի ՄԱՐՏ

«Երբ հայրենիքին սպառնում է օրհասական վտանգը, հավատը՝ Ավարայրի քաջերի ոգով, վեր է հառնում: Շինականն ու մտավորականը «ի զե՛ն» են կոչում, իսկ հավատն ու հոգևոր առաջնորդները դառնում են հավատի մույթեր իրենց՝ «հավատով խոստովանեմ» մոտեցմամբ: Ահա ինչու Ազատամարտի տարիներին ի մի համախմբվեցին, եւ հավատի ու ոգու թելադրանքով օրհնություն բարեբանող առաջնորդներ ի սեր Աստծո առաքելության հաղորդակից դարձան: Սակայն պատմությունը իր հրամայականը հորդորեց նման հպատակությունը կրողներին, ու նրանց ձեռքին զենք էր եւ հավատի խաչը: Նրանց պաշտպանական զրահի օգնությամբ ազատագրական պայքարը գնաց հաղթանակի փշոտ, բայց հաղթահարելի ճանապարհով: Միշտ էլ Սփյուռքի հավատն է եղե՛լ եւ մնացե՛լ է մեր դավանանքի առհավատչյան»:

ԺԱՄԱՆԱԿԻ ՎԿԱՆ

«Երբ շատ դեպքեր, իրողություններ անցյալում են մնում, եւ դրանք վերհիշելու հնարավորությունն էլ պակասում է, ըստ այդմ պատմության իրական երեսից էլ վերանում են շատ կարեւոր պատմական իրեղեն էջեր: Եթե Ոսկեդարյան ժամանակի մշակութային կորուստները չունենայինք, ինչպես նաեւ միջնադարյան եւ ուշ միջնադարյան պատմական էջեր պահպանվեին, թերեւս հայոց պատմության վիճահարույց եւ խրթին հարցեր վաղուց ի վեր լուծված կլինեին: Գուցե դրանք դառնային մի անանցանելի պատ, պատեր, եւ նենգ ու դարանակալ ոսոխը հիմնովին կսսկվեր… Այսօր էլ կան վիհի եզրին կանգնած իսկություններ, որ հանիրավի անդունդ կընկնեն, եթե լռի գրավոր հիշատակարանը, որի ջանադիրները կան, սակայն շատ լինելու դեպքում մնայուն կդառնան հերոսապատումներ, ինչպես նաեւ խարազանելի նենգ ու դրուժան «փաստերը» կդառնան պախարակիչ եւ խրատատու, որ բոլոր ժամանակներում էլ եղել են… Անհատների դերը նման խաչմերուկներում առավել քան վճռորոշ է եղել, լինում, կլինի՛»:

Էջի նյութերը՝
Վովա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ

ԳՐԱԴԱՐԱԿ

ԵՐԿՈՒ ՏՈՂ ԱՆՏՈՆԻԱ ԱՐՍԼԱՆԻ ԵՎ ՆՐԱ «ՄՇՈ ԳԻՐՔԸ» ՎԵՊԻ ՄԱՍԻՆ

Անտոնիա Արսլան. հայկական ծագումով իտալացի գրող, թարգմանիչ, գրականագետ, Պադովայի համալսարանի պրոֆեսոր:

Նա ծնվել և ապրել է Իտալիայում, ստացել է բանասիրական կրթություն, ուսումնասիրել անտիկ գրականություն, հրատարակել բազմաթիվ նորարարական ուսումնասիրություններ հայ և իտալական հեղինակների ստեղծագործությունների վերաբերյալ: Վերջին տարիներին գրել է Մեծ եղեռնի տարիներին հայ ժողովրդի տառապանքները ներկայացնող գեղարվեստական ծավալուն ստեղծագործություններ:

Ցեղասպանությունից փրկված հայերի երրորդ սերնդի ներկայացուցիչ Անտոնիա Արսլանը հարցազրույցներից մեկում այսպես է բնութագրում հայերին. «Նրանք մեծ երևակայություն ունեն, շատ են վստահում, շատ հույսեր են փայփայում… Մարտիրոսված են, բայց կարողանում են ժպտալ»:

Անտոնիա Արսլանին իրավամբ կարելի է օտարագիր հայ գրող համարել, քանզի եթե իր ազգի, հայրենիքի մասին իմանալը յուրաքանչյուր հայի պարտքն է, ապա Ա. Արսլանը Հայաստանի նկատմամբ լիովին կատարել է այդ պարտքը:

Եվ եթե հայերի ու Հայաստանի մասին գրելը աշխարհի տարբեր ծայրերում ապրող շնորհալի հայերի հոգու նվիրաբերումն է, ապա Արսլան-արձակագիրը, անշուշտ, իր անմնացորդ նվիրաբերումն ունի մեր տառապած հայրենիքին:

Պապի՝ Երվանդ Արսլանյանի հնօրյա տխուր պատմությունները և արյան կանչը տիկին Արսլանին ոգեկոչեցին ուսումնասիրել հնամյա ազգի պատմության արյունոտ էջերը, հավաստիանալ մանկության տարիներին իր լսած աներևակայական պատմությունների ճշմարտացիության մեջ և, ի վերջո, գրիչ վերցնել պատմաբանելու և սերունդների իմացությանը հանձնելու իր տոհմի ողբերգությունն ու տառապանքը, որը նաև իրենն էր, և որը հնարավոր չէր այլ ձևով ներկայացնել, եթե ոչ միայն անձնապես վերապրելով յուրաքանչյուր դրվագ ու սարսափ: Թերևս դարձյալ արյան կանչը նրան բերեց Հայաստան և Արցախ, նա տեսավ հայ մարդու հայրենական հյուրընկալ տունը, ճանաչեց նրա ավանդապաշտ հոգին և էլ ավելի փարվեց հոգևոր և իրական Հայաստանների ներդաշնակության գաղափարին:

Նշանավոր արձակագիրը Հայաստանում և Արցախում եղել է մի քանի անգամ, արժանացել բարձր ընդունելության և հարգանքի: Իր այցելություններից մեկի ժամանակ նա խոստովանել է. «Այստեղ ես ինձ Հայաստան երկրի մասնիկն եմ զգում»:

Արցախ կատարած վերջին այցելության ժամանակ Ա. Արսլանը հայտնել է իր բարեգործական ծրագրերի ու Արցախի մասին վեպ գրելու մտադրության մասին:

Արվեստի ասպարեզում ունեցած մեծ ավանդի և հայանպաստ գործունեության համար ճանաչված հեղինակը արժանացել է ՀՀ «Մովսես Խորենացի» և ԱՀ «Վաչագան Բարեպաշտ» մեդալների:

Դեռևս հայերեն չթարգմանված՝ Ա. Արսլանի՝ հայերի մասին գրված վեպերը մեծ ճանաչում են բերել հեղինակին, գերել օտարազգի ընթերցողին, որովհետև, ինչպես բանաստեղծը կասեր, «հայի կրակված սիրտն է այրվում», մոխրանում այդ գրքերի էջերում, որովհետև այդ պատմությունները ճշմարիտ են և հյուսված են տառապանքով: Եվ Արսլան-վիպագիրն է, որ իր հոգու միջով տանում է ցավը և դառնում այդ տառապանքի անտրտունջ կրողը:

Իր առաջին վեպը՝ 2004-ին գրված «Արտույտների ագարակը», հենց Արսլանյան տոհմի պատմությունն ունի հիմքում, և պապի պատմած ահավոր պատմություններն էին խտացել ու դարձել մի ամբողջ ազգի ողբերգություն, նաև՝ վերապրում: Եղեռնազարկ ժողովրդի սարսափները պատկերող այս երկը թարգմանվել է 20 լեզուներով և հասանելի է աշխարհի տարբեր երկրների բազմահազար ընթերցողներին: Վեպը հետաքրքրեց նաև իտալացի հայտնի ռեժիսորներ Պավիանի եղբայրներին. նրանք 2012-ին էկրանավորեցին այն: Այս ստեղծագործությունը մեծ ճանաչում բերեց հեղինակին և արժանացավ բազմաթիվ մրցանակների:

Անտոնիա Արսլանի՝ հայոց պատմության մեկ այլ ողբերգական ժամանակաշրջան ներկայացնող, բայց փաստորեն «Արտույտների ագարակը» պատմական վեպի շարունակություն հանդիսացող ստեղծագործությունը «Զմյուռնիայի ճանապարհը» վեպն է, որը լույս է տեսել 2009 թվականին:

Իր բազմաթիվ աշխատություններով ու վեպերով Հայոց ցեղասպանության ճանաչման ասպարեզում մեծ ներդրում ունեցած հայտնի հեղինակը 2012-ին Հայաստանում մասնակցել է «Երևանը՝ գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառման տոնակատարություններին, և հենց այստեղ էլ կազմակերպվել է Ա.Արսլանի վերոնշյալ երկու վեպերի հայերեն թարգմանությունների շնորհանդեսը:

Բանասիրական գիտությունների դոկտոր Սոնա Հարությունյանի հրաշալի թարգմանությունները հայ ընթերցողին հնարավորություն են ընձեռում վայելելու տաղանդավոր գրողի պատմական վեպերը, հիանալու գրողի գեղագիտական մեթոդի բազմաշերտ պատկերավորությամբ, հայ մարդու կերպարի համամարդկային ընկալմամբ:

Նշանավոր գրողի երրորդ վեպը, որ նույնպես պատմական հիմք ունի և դարձյալ հայերի նկատմամբ իրագործված և մինչև հիմա համաշխարհային դատապարտման չենթարկված հալածանքների և ոչնչացման իրական դեպքերի նկարագրությունն է, նոր մարտահրավեր ունի. այն ահազանգ է ազգակործան մշակութային ցեղասպանության մասին, որը նույնքան աղետալի է ու վտանգավոր, որքան և ֆիզիկական հալածանքները, կամ հաճախ հենց նման հալածանքների արդյունքում է, որ սկիզբ է առնում ազգային արժեքների աղավաղման կամ իսպառ խորտակման ողբերգությունը:

«Մշո գիրքը» գրվել է 2012-ին, վեպի դիպաշարի հիմքում իրական պատմությունն է մշեցի երկու կանանց մասին, որոնք գաղթի սոսկալի ու տանջալից ճանապարհներով կորստից փրկել և Ս. Էջմիածին են հասցրել հայ ժողովրդի հպարտությունը՝ Առաքելոց վանքի գանձը՝ Մշո մեծադիր ճառընտիրը:

Վեպը գրելու ոգեշնչման աղբյուրը, ինչպես վկայում է հեղինակը, մագաղաթյա հսկայի մասին Գոհար անունով կնոջ պատմած իրական և մանրամասն պատմությունն է, նաև անթաքույց հիացմունքը ծաղկազարդ ու մարգարտաշար ձեռագիր մատյանի նկատմամբ: «Արդյունքում ծնվեց այս պատմությունը: Թող համբերատար ընթերցողն այն ընդունի որպես Հայաստանի պտուղ, ծնռան նուռ կամ քաղցր ծիրան, և համտեսի, ինչպես ձմեռային գիշերներին բուխարու շուրջ հյուսվող հայկական հեքիաթները…»,- գրել է Ա. Արսլանը վեպի նախաբանում *(«Մշո գիրքը» Երևան, 2016թ., էջ 9):*

Մշո Ճառընտիրը… Հայոց ամենանշանավոր մատյանը. նշանավոր՝ իր զորությամբ ու հրաշագործությամբ, գեղեցկությամբ ու մեծությամբ, նաև իր փրկվելու պատմությամբ: Նա լիովին արժանի էր, որ իր մասին նման մի հեղինակի կողմից գրվեր նման մի պատմություն, որտեղ ամենագլխավոր կերպարը հենց ինքը Մատյանն է՝ դեպքերն առաջ մղող «հանգույցը», մյուս կերպարների մտահոգությունը և փրկության իմաստը: Մշո հանրահայտ գիրքը Աստծո խոսքն է և Աստծո զորությունը, լույսը, որ վեպի էջերում ուղենշում է հերոսների անցնելիք ճանապարհը:

Հեղինակի գեղագիտական մեթոդը և մտահղացումը այնքան ներդաշնակորեն են միահյուսվում պատկերված ժամանակաշրջանին և 21-րդ դարի մարտահրավերներին, որ գրավում են ամենաքմահաճ ընթերցողին անգամ, նրան ստիպում վերապրելու Սասնա լեռների և Մշո դաշտի հայերի ողբերգությունն ու տագնապները, տեսնելու պատմական ժամանակաշրջանի արհավիրքներն ու վտանգները:

«Վանքը բոցերի մեջ էր»,- այսպես է սկսում իր պատմությունը Անտոնիա Արսլանը: Ապա տագնապը Մշո դաշտին իջնող մառախուղի նման տարածվում է ամենուր և դառնում իրական վտանգ:

Երկու հույն հերոսների՝ Մակարիոսի և Էլենիի միջոցով է հեղինակը տալիս մշեցու և նրա հայրենիքի ճիշտ բնութագիրը, որ նրանք քաջասիրտ մարդիկ են, «բայց բոլոր հայերի նման կույր փիսիկներ են», հավատում են, որ պատերազմը կանցնի-կգնա, և իրենց ոչ մի վնաս չի լինի:

«Մշո դաշտը մեկուսացած հարթավայր է, վաղնջական ժամանակներից ի վեր հայկական քաղաքակրթության օրրաններից մեկը»,- վկայում է հեղինակը *(Նույն տեղում, էջ 15):*

Լեռներով շրջափակված այդ բարեբեր հովտում հայերն ապրել են դարեր, կառուցել իրենց վանքերն ու տները, մշակել ու դանդաղահոս գետերի կենարար ջրերով ոռոգել այգիներն ու արտերը:

Աշնանային այդ օրը Մշո դաշտը տագնապում էր, որովհետև վանքն այրվում էր, և ոչ ոք պատճառը չգիտեր: Առտնին գործերով զբաղված երկու երիտասարդ կանայք՝ Անուշն ու Գոհարը, գյուղից դուրս հանդիպում են ռուսական ճակատից նահանջող թուրքական զորաբանակին, թաքնվում զինվորներից և մթնած վերադառնում գյուղ՝ առանց դույզն-ինչ կասկածելու, որ աղետն իրենց ընդմիշտ բաժանել է սիրելիներից, որ հայրենի եզերքը վերածվել է մի մեծ մոխրակույտի, որ գյուղերի վրա տիրականորեն տարածվող անծանոթ հոտը լերդացած արյան մահաբեր հոտն է:

Հեղինակը տրամաբանական լուծում է տալիս դեպքերի ընթացքին. երկու անօգնական կանայք շտապում են դեպի այրվող վանքը՝ կարծես փրկություն ակնկալելով ամենակարող Սուրբ Առաքելոցից և թաքուն մի հույս փայփայելով, որ կգտնեն կորցրած հարազատներին: Սակայն կյանքի բոլոր սյուները խորտակվել էին. նրանց սպասում էր հուսահատ ու անորոշ օրերի շարքը: Դաշտի բնակիչներից փրկվել էին հինգը՝ երկու հայ կանայք, գյուղի երեխաներից մեկը՝ Հովսեփը և երկու հույները, որոնք ժամանակին հեռացել էին գյուղից ու թաքնվել անտառում:

Կերպարների հետաքրքիր համադրություն է ստեղծել գրողը. հայ կանանցից մեկը՝ Անուշը, կորցրել էր երեք զավակներին և փորձում էր իր քարացած հոգում մի փոքր գորով գտնել որբացած Հովսեփի համար: Մյուսը՝ Գոհարը, Անուշին և Հովսեփին սատարողն ու հուսադրողն էր, առաջ տանող ուժն ու ապավենը:

Ինչո՞ւ է հեղինակը մտահղացել ստեղծել հույների կերպարներ, որոնք փաստորեն նույնպես մեծ դեր ունեն Մատյանի փրկության գործում: Մակարիոսն ու Էլենին փոխում են հայրենիք վերադառնալու իրենց որոշումը և միանում հայերին՝ իմանալով նրանց մեծ առաքելության մասին: Իսկ առաքելությունը «Մշո Ճառընտիրը» փրկելն էր:

Թերևս վիպասանի նպատակն էր ցույց տալ, որ օտարներին անգամ առինքնել է մագաղաթյա հսկան, և նրա սուրբ զորությունը անգամ թերահավատ ու կասկածոտ հույնին՝ Մակարիոսին կարող էր խոնարհեցնել:

Այնքան իրական ու սովորական է դառնում դեպքերի հերթագայությունը, որ թվում է՝ Երկնայինն է առաջնորդում փոքրիկ խմբին փրկության արահետներով, և հեղինակն է հենց ընթերցողի հետ քայլում խմբի հետ, հորդորում զգույշ և անաղմուկ լինել:

Տիկին Արսլանի պերճախոս գրիչը աննկարագրելի գույներով ու անկրկնելի շքեղությամբ է ներկայացնում Մշո գրքի գեղեցկությունը, և դա գեղարվեստական երկի ամենազգացական նկարագրությունն է, քանզի Մատենադարանում պահվող «Մշո Ճառընտիրը» վեպի գլխավոր գիրք-կերպարի պատմական նախատիպն է, և հեղինակին, ինչպես նշեցինք, ոգեշնչել են ձեռագրի վայելչությունն ու ազնվականությունը: «…Գույները վերստին կենդանացան ու փայլեցին, սկսեցին աչքով անել: Էլենին իրեն օրհնված զգաց՝ զմայլվելով այդ անշարժ, բայց կյանքով առլեցուն պատկերներով, ծաղկազարդ գլխատառերով և էջերի լուսանցքների նուրբ զարդանախշերով, որոնք խորհրդավոր կենդանիների պես ցատկոտում էին, իսկ հայոց տառերը ձգվում էին մեկը մյուսի ետևից, ինչպես խորհրդավոր ձեռագործ» *(Նույն տեղում, էջ 69):*

Ճակատագրական որոշումը կայացված էր ի վերուստ. գիրքը Մակարիոսի դանակով բաժանվեց երկու մասի, երկու կանայք անտրտունջ իրենց շալակն առան թանկագին մասունքը, և խումբը վտանգավոր ու անծանոթ ճանապարհներով քայլեց դեպի փրկություն:

Գրողի երևակայությունը համոզիչ գույներով է պատկերում Մշո գրքի փրկության ճանապարհը. եթե Ա. Արսլանի ստեղծած կերպարներից յուրաքանչյուրը իր կյանքն ու հոգսն ուներ մինչև արհավիրքը, ապա եղերական դեպքերը միավորել էին նրանց մի կարևոր խնդրի շուրջ. Նրանց միակ մտահոգությունը Գիրքը փրկելն էր:

Վիպասանի զգայուն սիրտը անհանգիստ բաբախյունով կարծես ուղեկցում է խմբին, նրա անքթիթ աչքերը գաղթի դժվարին անցուղիներում հսկում են նրանց ապահովությունը: Եվ մեծատաղանդ արվեստագետը միայն կարող էր կանգ առնել ճիշտ ժամանակին, նման սրտակոտոր պատմությանը երջանիկ ավարտ կանխատեսել և մարկեսյան պատկերավորմամբ ներկայի մեջ ներհյուսել ապագան: «…Հեղինակը հոգնել է Կորուսյալ Հայրենիքի այս անվերջանալի ողբերգությունը պատմելուց… Հեղինակն արդեն սպառել է արցունքները,- խոստովանում է Ա. Արսլանը:- Բայց և այնպես, այս պատմությունը երջանիկ ավարտ ունի: «Մշո գիրքը» կփրկվի…» *(Նույն տեղում, էջ 133):*

Ի՞նչ եղան այս մեծ առաքելության անմռունչ պարտավորյալները: Հեղինակը համբերատար հոգածությամբ խոսում է նրանց բոլորին վիճակված ողբալի ճակատագրի մասին:

Անուշը, որդեկորույս մոր անամոք վիշտը հոգում անթեղած, անցավ դժոխքի ճանապարհը հանուն Մատյանի փրկության. Նա Էջմիածին հասցրեց Մշո գրքի իր կեսը, մնաց աննշան ու տառապյալ, ինչպես բոլոր վերապրածները:

Գոհարին հաղթեց մահացու ախտը, նա մեռավ Էրզրումում, Գրքի նրա կեսը թաղվեց հողում. հետագայում այն միացվեց մյուս կեսին, և Գիրքը ամբողջացավ:

Հույն Մակարիոսն ու Էլենին նահատակվեցին հանուն Մատյանի փրկության: Հեղինակի մտահղացումը, այն է՝ ցույց տալ ճակատագրի նույն բավիղներով անցած բախտակից ժողովուրդների սրտացավությունը իրար նկատմամբ, մարմնավորվել է երկու հույների կերպարներում:

Փոքրիկ Հովսեփը, որ մտքում որոշել էր հոգ տանել վշտից քարացած Անուշի մասին, կորցրեց նրան որբության անիմանալի գոյապայքարում, և տասնյակ տարիներ հետո հեռավոր Ամերիկայում շարունակում էր առանձին գորովանքով փայփայել գորգանախշ տոպրակը՝ իր կորցրած տնից մնացած միակ հիշատակը:

Վեպի կենտրոնական հերոսը՝ Մշո գեղազարդ գիրքը, փրկվեց. սա է վիպագիրն անվանում երջանիկ ավարտ: Գրքի փրկությունը հայ ժողովրդի գոյատևելու և ամեն մի դժվարությունից հետո վերապրելու կամքն է խորհրդանշում:

Թույլ ու անպաշտպան երկու կանայք հաստատում են մեր լինելության իմաստը, և Արսլանը հավաստում է անհերքելի ճշմարտությունը. գաղթի ճանապարհն անցած Մշո գիրքը դարձավ փրկիչ, հայ հանճարի, արվեստի, հոգևոր վերապրումի և մտքի հարատևման փրկիչը:

Րաֆֆին վկայում է. «Մեծ կրթական ազդեցություն ունի պատմական վեպը ընթերցողի համար, երբ նա տեսնում է յուր նախնյաց մեծագործությունները և աշխատում է հետևել նրանց առաքինություններին, տեսնում է նրանց մոլորությունները, աշխատում է հեռու պահել իրան նրանց կատարած սխալներից» *(Րաֆֆի. «Սամվել», 1967թ., Երևան, էջ 6):*

«Մշո գիրքը» վեպը սթափեցնող և հուսադրող ուժ ունի իր մեջ:

Մեզ վիճակված է ապրել դարանակալ ու նենգ թշնամու կողքին, և նա ամեն րոպե պատրաստ է խեղաթյուրելու, աղավաղելու ճշմարտությունը: Մեր հինավուրց վանքերը վերածվում են մզկիթների, մեր պատմական քաղաքներն անվանափոխվում և օտար անուններ են ստանում, մեր պատմությունը շրջափոխվում է և աղավաղվում: Հայ ժողովրդի հետ կատարված վերջին դեպքերը ապացույցն են այս ամենի: Թշնամու ձեռագիրը չի փոխվել…

«Մենք դատապարտված ենք ապրելու…»,- սփյուռքահայ հայտնի գրող Ռոպեր Հատտեճյանի այս խոսքը հայ մարդու անկոտրում կամքն ու պայքարելու անհրաժեշտությունն է խտացնում:

Այո՛, մենք դատապարտված ենք ապրելու դարավոր թշնամու հարևանությամբ, դատապարտված ենք ստեղծելու, պահպանելու և պաշտպանելու…

Մանուշ ԲԱԼԱՅԱՆ
Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ՄԱՐԶԱԿԱՆ

ՍՊՈՐՏԸ ՄԵԶ ՀԵՏ Է, ԻՍԿ ՄԵՆՔ` ՍՊՈՐՏԻ

Նորություն չէ, որ արցախցիներն իրենց բնավորությանը համահունչ` նախապատվություն են տալիս ուժային եւ մենապայքարային մարզաձեւերով պարապելուն: Քիչ չեն այն մարզիկները, ովքեր, երբեմն պարապելով տվյալ սպորտի համար ոչ բավարար պայմաններում, այնուամենայնիվ, կարողանում են բարձր արդյունքի հասնել նույնիսկ միջազգային ասպարեզում: Ավելի քիչ թիվ են կազմում այն երիտասարդները, ովքեր սպորտը դիտարկում են ոչ միայն որպես մարզական տարբեր հարթակներում հաղթանակի հասնելու միջոց, այլեւ առողջ ապրելակերպ, ֆիզիկապես, հոգեպես եւ մտավոր ներդաշնակության հասնելու լավագույն ուղի:

«Լուսարար»-ի մարզական էջի հերթական հյուրը սիրողականից պրոֆեսիոնալ սպորտ հասած` ՀՀ ուժային եռամարտի առաջնության արծաթե մեդալակիր Աշոտ Սողոմոնյանն է, որի հետ ընդգրկուն զրույցում պարզաբանեցինք Արցախում ուժային սպորտաձեւերի զարգացման կարեւորությունը, ռազմահայրենասիրական դաստիարակության շրջանակում երիտասարդներին սպորտի շուրջ համախմբելու եւ մոտիվացնելու անհրաժեշտությունը, սպորտի միջոցով անհատի ֆիզիոլոգիական եւ հոգեբանական գծերի կատարելագործման հնարավորությունը եւ ոչ միայն:

Ծնվել է 1985 թ. հուլիսի 2-ին Ստեփանակերտում: Ավարտել է Ստեփանակերտի հ. 1 դպրոցը: Ընդունվել է ԱրՊՀ տնտեսաիրավագիտական ֆակուլտետը, ստացել համապատասխան մասնագիտություն: Աշխատում է ԱՀ ՆԱ Կառավարության Գործերի կառավարչությունում (ԿԳԿ): Դպրոցական տարիներից ակտիվ հաճախել է տարբեր մարզական պարապմունքների, մասնավորապես սամբոյի եւ բռնցքամարտի: Վերջին տարիներին պարապել է Ուժային եռամարտի ֆեդերացիայում` մարզիչ Արկադի Զաքարյանի մոտ: Տարեցտարի բացահայտելով եւ տիրապետելով երկաթի ու ծանր քաշերի հետ աշխատելու նրբություններին` սիրողական պարապող Աշոտը դարձավ եզակի մարզիկներից մեկը, որը ջանք ու կամք չխնայեց նախընտրած սպորտին նվիրվելու, այդ թվում նաեւ` մրցույթի մասնակցելու համար:

- Աշո՛տ, կարո՞ղ եք պարզաբանել, թե ինչ մարզաձև է ուժային եռամարտը:

- Ուժային եռամարտը ծանր աթլետիկայի ձև է: Որպես սպորտաձև այն ծագել է Ամերիկայում: Այլ կերպ անվանում են նաև փաուերլիֆթինգ: Մարզաձևի էությունը կայանում է մարզիկի կողմից առավելագույն քաշերի հաղթահարման մեջ: Եռամարտ է կոչվում այն պատճառով, որ դասական մրցաշարերն ընդգրկում են երեք մրցութային կարգ` կքանիստ ծանրաձողով, հրում պառկած վիճակից և ծանրաձողով ձգում: Այս վարժությունների հանրագումարով որոշվում է մարզիկի աստիճանը: Սա հզոր ուժային սպորտ է: Բացի ֆիզիկական տվյալներից այս սպորտով պարապելու համար պետք է կամքի ուժ, աշխատասիրություն: Ինչպես գրեթե բոլոր ուժային մարզաձևերը, փաուերլիֆթինգը նույնպես վնասվածքավտանգ է: Պետք է քաջություն ունենալ դրանով պարապելու համար և կիրառել ճիշտ տեխնիկա:

- Ինչո՞ւ նախապատվություն տվեցիք այդ յուրահատուկ մարզաձևով պարապելուն:

- Նախ նրա համար, որ ուժային եռամարտը տղամարդու սպորտ է, չնայած դրանով պարապում են նաև աղջիկներ, այնուամենայնիվ, ինձ գրավեց մարմինն ավելի ուժև դարձնող այդ սպորտաձևը: Ինչպես հայտնի է, ֆիզիկական աշխատանքը, ծանր քաշերի հետ զբաղվելը տղամարդու մոտ զարգացնում են մկանային համակարգը և բարձրացնում կարևոր հորմոն տեստոստերոնը: Դրանով պայմանավորված` ուժային սպորտով պարապող տղաները դառնում են ավելի ուժև, առողջ, սլացիկ, առնական: Դա ավելի գրավիչ է դարձնում տղամարդուն հակառակ սեռի համար: Ի տարբերություն զարգացած գիտակցություն ունեցող ազգերի, հայ աղջիկները (իհարկե, ոչ բոլորը) կարծես թե չեն կարևորում իրենց ընտրյալի մարզված լինելը: Նույնը կարելի է ասել տղաների առումով. շատերի համար կարևոր չէ, որ հակառակ սեռը կոփված լինի, չնայած այն հանգամանքին, որ մարզված լինելը կարող է կանխել կանացի մի շարք խնդիրներ: Բացի դրանից, ֆիզիոլոգիական փոփոխություններին զուգահեռ զարգանում են նաև ներքին գծեր, կամային հատկություններ, սթրեսակայունություն: Որպեսզի մարդն իրեն լիարժեք զգա, անհրաժեշտ է ֆիզիկապես, հոգեպես և մտավոր զարգացած կարողություններ ունենալ և անընդհատ զարգացնել դրանք: Հոգևոր սնունդ ստանում եմ Աստվածաշնչից, մտավոր կարողություններ կարելի է զարգացնել ինքնակրթությամբ զբաղվելով: Իսկ սպորտն այն միջավայրն է, որտև կարելի է ձեռք բերել մարմնի, հոգու և մտքի ներդաշնակություն: Այս մարզաձևով պարապելու մոտիվացիան

թերևս դա եմ համարում:

- Քչերին է հաջողվում նույն տրամաբանությամբ մարզաշխարհ մտնել ու շարունակել պարապել` սպորտը դարձնելով կենսակերպ: Ձեր դեպքում նկատվում է ավելին. փորձել եք Ձեզ նույնիսկ մրցաշարի մասնակցելով և կարողացել եք մրցանակային տեղ զբաղեցնել: Ինչպե՞ս է հաջողվում համատեղել մարզադահլիճում անցկացվող երկար ու հաճախ նաև հոգնեցնող ժամերը աշխատանքի հետ:

- Սկզբում սիրողական էի պարապում: Շուրջ երկու տարի պարապելուց հետո մարզիչն ասաց, որ տեսնելով պարապմունքի ընթացքում ցուցաբերած իմ հատկությունները, նպատակային է համարում մասնակցությունս նաև մրցաշարերի: Հայաստանի Հանրապետության ուժային եռամարտի առաջնության մասնակցեցի, հանդես եկա երեք կարգերում և արծաթ նվաճեցի: Համատեղելն այնքան էլ հեշտ չէ, հատկապես մրցույթի պատրաստվելիս: Մարզաձևի պահանջներն էլ են ոչ ստանդարտ: Պետք է անպայման հետևել ճիշտ սննդակարգին և քնի ռեժիմին: Ինտենսիվ պարապմունքից հետո օրգանիզմը, հատկապես նյարդային համակարգը պետք է հանգստանա: Աշխատանքի հետ դժվար է լինում կազմակերպել ճիշտ ռեժիմ: Բայց և առավելությունը կայանում է նրանում, որ կոփվող մարզիկի հոգեկերտվածքին հարիր չէ դժվարությունների առաջ նահանջելը, իսկ ցանկացած վիճակից կարելի է ելք գտնել: Արտաքին պայքարից բացի մենք նաև ներքին պայքար ենք մղում ինքներս մեզ հետ, մեր բնավորության, հոգեբանական հատկությունների հետ: Ծանրաձողի հետ պայքարի ընթացքում մենք նաև ներքուստ ենք պայքարում ու զարգանում, կոփվում, ինչը թույլ է տալիս կյանքի բոլոր ոլորտներում լիարժեք դրսևորվել, գտնել օպտիմալ ելք ու դժվարություններից չխուսափել:

- Կան մարզաձևեր, որոնցով կարելի է ինքնուրույն պարապել, երբեմն նույնիսկ համացանցի առկայությունն էլ բավական է լինում, և մարդիկ չեն դիմում մարզչի օգնությանը: Ձեր սպորտում ինքնուրույն պարապելով զարգանալու հավանականություն կա՞, արդյոք:

- Ինքնուրույն պարապելով ևս հնարավոր է որոշ արդյունքի հասնել, բայց մարզչի օգնությունը, նրա փորձի ու հմտությունների փոխանցումը մարզիկներին անփոխարինելի են: Ինքնուրույն պարապելիս հնարավոր է ավելի շատ վնասվածքներ ստանալ` չտիրապետելով ճիշտ տեխնիկայի: Հմուտ մարզիչը կարողանում է բացատրել, թե ինչպես խուսափել ծանր վնասվածքներից: Մարզիչը նաև հոգեբանորեն է ազդում իր սաների վրա, նրա ազդեցությունից շատ բան է կախված, հատկապես մարզիկների հաջողության հասնելու հարցում: Կարևոր են մարզադահլիճը, գույքը, ընդհանուր մթնոլորտը, որում պարապում են մարզիկները: Մեծ նշանակություն ունեն թիմակիցները: Միասին պարապելը ոչ միայն հետաքրքիր է ու աշխույժ, այլև համատև պարապմունքները բարձրացնում են թիմային ոգին, իրար օգնելու կարողությունը: Մարզիկին ու մարզաձևին կապող ուժը մարզիչն է: Մենք շատ բան ենք սովորել մեր մարզիչ Արկադի Զաքարյանից:

- Ինչպես հայտնի է, պատերազմի պատճառով պարապմունքները դադարեցվել էին: «Լուսարար»-ը խորը ցավով լուսաբանել էր պատերազմի զոհ դարձած մեր հերոս մարզիկների կյանքն ու մարզական գործունեությունը, կիսել հարազատների, ընկերների ու թիմակիցների կորստի վիշտը: Ցավոք, Ուժային եռամարտի ֆեդերացիան ևս կորցրեց իր սաներից: Հավանաբար, ժամանակ է պետք հաղթահարելու համար թիմակից տղաների կորստի ցավը, պատերազմից հետո ստեղծված բարդ իրավիճակը և նոր ուժ գտնելու պարապմունքները վերսկսելու համար:

- Շուրջ մեկ տարի է անցել պատերազմից հետո, բայց կարծես թե երեկ լիներ: Շատ մեծ ու անդառնալի կորուստներ ունենք, շատ բան ենք կորցրել, շատերին ենք կորցրել… Մի կողմից կորստի ծանր ապրումները, հետպատերազմյան բարդ ու անորոշ իրավիճակը, մյուս կողմից էլ համատարած ապատիան (անտարբերության վիճակը), որն արտահայտվում է նաև սպորտի ոլորտին պետական մարմինների կողմից ոչ պատշաճ ուշադրությամբ: Սպորտը կարևոր դերակատարություն ունի սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Մեր ազգը պետք է լինի ֆիզիկապես և հոգեբանորեն կոփված: Այս կարևորագույն հարցին պետական մասշտաբով տրված չէ լուծում: Գործող ֆեդերացիաները ձգտում են մրցույթների մասնակցել միջազգային մարզահարթակներում: Դա ողջունելի է: Բայց այսօր մենք այլ մարտահրավերներ էլ ունենք, որոնք չպետք է շրջանցել: Խոսք է գնում ազգային ինքնագիտակցումի ճիշտ ձևավորման, ազգային արժեքների ճիշտ ընկալման, վնասակար սովորություններից ազգի մաքրման և նման կարևոր այլ հարցերի մասին: Պետք է պայմաններ ստեղծել և աշխատել պարտադիր ներգրավել բոլորին հատկապես ուժային սպորտի, մարտարվեստների պարապմունքների: Նշեմ, որ մեր ֆեդերացիայի զարգացման համար չկան համապատասխան պայմաններ: Հնարավոր է, որ դադարը պայմանավորված է նաև դրանով: Չունենք մարզադահլիճ, գույք: Այդուհանդերձ, մենք չենք պատրաստվում հանձնվել: Պատրաստվում ենք սեպտեմբերից վերսկսել պարապմունքները` հույս ունենալով, որ պետական միջամտությամբ գոնե մարզադահլիճ կունենանք, իսկ գույքը կարող ենք ձեռք բերել սեփական միջոցներով: Մեր թիմակիցներից ոմանք չեն էլ դադարեցրել պարապմունքները: Անհատական սկզբունքներով կամ առհասարակ մարզադահլիճի բացակայությամբ պայմանավորված` պարապել են մարզչի ավտոտնակում: Նախկինում էլ նել են պահեր, երբ անմխիթար վիճակը չի խոչընդոտել մեզ. պարապել ենք նկուղային տարածքում, առանց վերանորոգման, երբեմն նույնիսկ մոմի լույսի տակ: Սա այն դեպքն է, երբ արդյունքը հիմնված է մարզչի և մարզիկների էնտուզիազմի վրա: Խնդիրները կհաղթահարենք: Սպորտում «մկանային հիշողություն» հասկացություն կա, որը թույլ է տալիս արագ վերականգնվել դադարից հետո, այդպես էլ կանենք: Սպորտը միշտ մեզ հետ է, իսկ մենք` սպորտի:

- Ուրախալի է, որ ունենք Ձեզ նման խանդավառներ: Աշո՛տ, Դուք որպես զինվորական ծառայություն անցած, Ապրիլյան և 44-օրյա պատերազմներին մասնակցած մարզիկ, ավելի պարզ եք տեսնում սպորտով պարապած լինելու առավելությունները ռազմադաշտում: Կարո՞ղ եք մեկնաբանել:

- Ռազմադաշտում սպորտով պարապած, ուժև և դիմացկուն մարդիկ առավել քան պահանջված են: Առավելությունները միանշանակ ակնհայտ են: Խոսք է գնում կյանքի ու մահվան մասին: Կան վառ օրինակներ, երբ հենց մարզված լինելու շնորհիվ հաջողվել է գոյատևել կամ ընկերոջ կյանք փրկել: Պատերազմը միայն զենքի կռիվ չէ: Զենքի դեմ բոլորը հավասար են: Բայց լինում են դեպքեր, երբ պետք է ֆիզիկական աշխատանք կատարել, այն էլ` սթրեսային պայմաններում: Պետք է խրամատ փորել, օրինակ, կամ ծանր զենք տեղափոխել արագ կամ կարողանալ արագ ու աննկատ վազել: Պատկերացրեք, զինվորը կարողություն չունենա իր վիրավոր արնաքամ նող մարտական ընկերոջը հանել վտանգավոր վայրից: Օրինակները բազմաթիվ են: Մարզված զինվորն իսկական մարտիկ է, նրա մոտ ավելի շատ են ողջ մնալու, կյանք փրկելու, դիմադրելու և պայքարելու ընդունակությունները:

- Հուսանք, որ սպորտով ազգ կոփելու մարտավարական ծրագիրը չի մնա լոկ իբրև ծրագիր: Հնարավո՞ր է, որ առաջիկայում Ձեզ փորձեք նաև մարզչական գործունեության մեջ: Այդ ուղղությամբ որևէ քայլ ձեռնարկո՞ւմ եք:

- Առայժմ այդ ուղղությամբ քայլեր չեմ ձեռնարկել: Քայլերն ավելի շատ միտված են ֆեդերացիան զարգացնելուն, մարզադահլիճ ունենալուն, մեր մարզաձևի համար անհրաժեշտ գույք ձեռք բերելուն: Մարզիչ Զաքարյանը լավ կատարում է իր աշխատանքը, առայժմ երկրորդ մարզիչ պահանջված չէ: Բայց հետագայում միգուցե պայմանները բարելավվելուն զուգահեռ նաև նոր մարզիկներ ընդգրկվեն մեր ֆեդերացիայի մեջ: Այդ դեպքում գուցեև անհրաժեշտություն լինի մարզչական հմտություններ ձեռք բերել և գործունեություն ծավալել:

- Բարի մեկնարկ վերսկսվող պարապմունքների և հաջողություն Ձեր նախաձեռնություններում: Շնորհակալություն հետաքրքիր հարցազրույցի համար:

- Շնորհակալ եմ, խնդրեմ:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

ՆԱՊՈԼԵՈՆ ԲՈՆԱՊԱՐՏԸ ԵՎ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ

«Մաթեմատիկայի զարգացումը և նրա կատարյալ լինելը խիստ կապված է պետության բարեկարգ իրավիճակի հետ» - Նապոլեոն:

Ֆրանսիացի նշանավոր զորավար Նապոլեոն Բոնապարտը մաթեմատիկայի

Նապոլեոն Բոնապարտ (1769 - 1821)

մեծ սիրահար էր: Նա ժամանակ էր գտնում զբաղվել դրանով, անձնական բավարարություն ստանալու համար: Նապոլեոնը համարում էր մաթեմատիկան որպես գեղեցիկ օբյեկտ, որում կարելի է ցուցադրել սրամտություն և հայտնագործություն: Դրա վառ ապացույցը նրա կողմից կազմած երկրաչափական խնդիրների բազմազանությունն ու թվաքանակն է:

Մաթեմատիկայի բնագավառում ծառայությունների համար Նապոլեոնը ընտրվել է Ֆրանսիական Գիտությունների Ակադեմիայի ակադեմիկոս և շնորհվել է Մաթեմատիկայի մագիստրոսի կոչում: Բերենք նրա խնդիրներից մի քանիսը:

Խնդիր 1. Կամայական ABC եռանկյան կողմերի վրա, որպես հիմքերի, կառուցված են հավասարակողմ եռանկյուններ, արտաքին ձևով, նկ. 1: Ապացուցել, որ ստացված եռանկյունների կենտրոնները հանդիսանում են հավասարակողմ եռանկյան գագաթներ:

Լուծում. Խնդիրն ունի բավականին գեղեցիկ ապացույց:

Թող O_1, O_2 և O_3 կետերը հավասարակողմ եռանկյունների կենտրոններն են:



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3

Կատարենք լրացուցիչ կառուցումներ: Հատվածներով միացնենք O_1, O_2, O_3 կետերը եռանկյան ամենամոտ գագաթներից երկուսի հետ և երեք կետերը միացնենք իրար հետ: Հավասարկողմ եռանկյան հատկության համաձայն՝

$$AO_1=O_1B,\ BO_2=O_2C,\ CO_2=O_2A;\ \angle AO_1B=\angle BO_2C=\angle CO\angle_2A=120^\circ;$$
$$\angle O_1AO_2+\angle O_1BO_2+\angle O_2CO_3=360^\circ:$$

Առանձնացնենք $AO_1BO_2CO_3$ վեցանկյունը, իսկ նրա արտաքին կողմում գտնվող քառանկյունները հեռացնենք: Կստանանք նկ. 2-ում պատկերված գծագիրը: Կտրենք նշված վեցանկյան O_1AO_3 և O_2CO_3 եռանկյունները և տեղաշարժելով հարթության մեջ այնպես ինչպես ցուցադրված է նկ. 3-ում, կստանանք $O_1DO_2O_3$ քառանկյունը: O_1O_2 հատվածը այն կտրում է երկու հավասար եռանկյունների, (երեք հավասար կողմերով): $\angle DO_2O_3=\angle DO_1O_2=120^\circ$: Հետևաբար $\angle O_2O_1O_3=\angle O_1O_2O_3=60^\circ$: Այսպիսով $O_1O_2O_3$ եռանկյունը հավասարակողմ է, այն ինչ պետք էր ապացուցել:

Խնդիր 2. Տրված է շրջանագիծ իր կենտրոնով: Պահանջվում է շրջանագիծը բաժանել չորս հավասար մասերի, առանց օգտվելու քանոնից, նկ. 4:



Նկ. 4

Լուծում. Թող շրջանագծի կենտրոնը O-ն. է: Շրջանագծի կամայական A կետից անջատում ենք լար հավասար շրջանագծի շառավղին, կրկնում երեք անգամ՝ կստանանք A, B և C կետերը: Նկատենք, որ AB լարը ձգում է շրջանագծի աղեղի 1/3-ը, հետևաբար հավասար է շրջանագծին ներգծյալ եռանկյան կողմին, հետևաբար այն հավասար է $r\sqrt{3}$, որտեղ r-

Պիեր Սիմոն Լապլաս (1749 - 1827)

ը շրջանագծի շառավիղն է: AD-ն շրջանագծի տրամագիծն է: A և D կետերից գծում



Ժ. Լուի Լագրանժ (1736-1813)

ենք AC շառավղով աղեղներ, որոնք հատվում են M կետում: Ցույց տանք, որ MO հեռավորությունը հանդիսանում է քառակուսու կողմը, որը ներգծված է մեր շրջանագծին: AMO եռանկյան մեջ էջը՝ $MO=\sqrt{(AM^2-AO^2}=\sqrt{(3r^2-r^2)}=r\sqrt{2}$, այսինքն հավասար է ներգծյալ քառակուսու կողմին: Այժմ մնում է կարկինի MO բացվածքով շրջանագծի վրա հաջորդաբար անջատել չորս հավասար լարեր, որպեսզի ստանանք շրջանին ներգծյալ քառակուսու գագաթները: Այսպիսով շրջանագիծը բաժանվեց չորս հավասար մասերի:

Խնդիր 3. Տրված են A և B կետերը: Այդ կետերի հեռավորությունը մեծացնել հինգ անքամ:

Լուծում. B կետից AB շառավղով կառուցենք շրջանագիծ: A կետից անջատենք AB երկարության լարեր հաջորդաբար երեք անգամ, կստանանք C կետը: Ակնհայտ է, որ դա կլինի A-ին տրամագծորեն հակադիր կետը: $AC=2\cdot AB$: Նորից կառուցենք շրջանագիծ C կենտրոնով BC շառավղով: Նույն անալոգիայով կարող ենք կառուցել B կետին տրամագծորեն հակադիր կետը:

Այն A կետից հեռացված կլինի AB հատվածի եռապատիկի չափ, և այլն:

Հայտնի է նաև, որ զրույցի ժամանակ ֆրանսիացի հայտնի մաթեմատիկոսներ Լագրանժի և Լապլասի հետ Նապոլեոնը զարմացրել է իր գիտելիքներով, պատմելով Մասկերոնի խնդիրների լուծման իր մեթոդների մասին: Լսենք երկխոսություն:

Նապոլեոն- Համձարեղ Նյուտոնը շարունակ դիմում է Աստծուն, իսկ Դուք գրել եք մեծ գիրք Երկրի կառուցվածքի մասին, բայց ոչ մի անգամ չեք նշել աստծո մասին:

Լապլաս - Պարոն Բոնապարտ, ես այդ հիպոթեզի կարիքը չունեմ:

Խնդիր 4. Նապոլեոնի ընդհանրացված թեորեմը, (Տեբոի խնդիրը):



Նկ. 5

Եթե զուգահեռագծի կողմերի վրա կառուցենք քառակուսիներ, ապա նրանց կենտրոնները կազմում են քառակուսի, նկ. 5:

Լուծում. Թող O_1, O_2, O_3, O_4 կետերը զուգահեռագծի կողմերի վրա կառուցած քառակուսիների կենտրոններն են: Նշանակենք $\angle BAD=\alpha$: Դիտարկենք այն դեպքը երբ $\alpha<90^\circ$: Քանի որ

$O_1A=O_1B,\ AO_4=BO_2,\ \angle O_1AO_4=$
$45^\circ+\alpha+45^\circ=90^\circ+\alpha=\angle O_1BO_2,$

ապա O_1AO_4 և O_1BO_2 եռանկյունները հավասար են, երկու կողմով և նրանցով կազմած անկյան հայտանիշի համաձայն: Ուրեմն $O_1O_4=O_1O_2$: $\angle O_2O_1O_4=\angle O_2O_1B+\angle BO_1O_4=\angle AO_1O_4+\angle BO_1O_4=90^\circ$:

Այժմ բերենք Նապոլեոնի ասույթներից մի քանիսը, որոնք բնութագրում են նրան որպես զորավար, որպես քաղաքագետ, որպես կայսր:

- Սվիններով կարելի է անել ամեն ինչ, սակայն նրանց վրա նստել չի կարելի:
- Կա երկու լծակ, որոնցով կարելի է շարժել մարդկանց - դա վախն է և անձնական շահը:
- Պատերազմում հաղթում է ոչ թե նա, ով լավ խորհուրդ է տվել, այլ նա ով պատասխանատվություն է ստանձել այն կատարել, և հրամայել է կատարել:
- Քաղաքագետը չունի սիրտ, նա ունի միայն գլուխ:
- Ամենամեծ անբարոյականությունը՝ սկսել մի գործ, որը չես կարող կատարել:

Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոն, մ.գ.թ., դոցենտ

ԿՈՐԵԼ Է

Անատոլի Սևակի Բեգլարյանի միջնակարգ կրթության ԱԱ N 245499 համարի ատեստատը՝ տրված «Ստեփանակերտի Վ.Չհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ից՝ 2021 թվականին:

Համարել անվավեր:

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ
Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 7.09.2021թ.:
«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: